ԳԱՍՏԵՐԱԶԱՐԴ ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԻՐ

եւ յաւելած դաստիարակների համար

XVI ՏԱՐԻ № 11 ՆՈՅԵՄԲԵՐ 1898 Թ.

* * *

Երկին քը կամ իր բոցով հրեհաց, վառում է հան- դարտ տխուր վեր-

Չարժա՝ բայց նւազելով, հանդիսում է կամաց, մութ խաւարի հետ կռւելով անյոյս։

Ա. Ս.



ԵԹՈՎՊԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՓՈՔՐԻԿ ԶՐՈՅՑ

I

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ

Ժամանակով Եթովպիայում (Աբեսսինիա) ապրում էր մի գիւղապետ իր կնոջ հետ։ Մի անգամ նրանք ճանապարհորդում էին. ինքը գիւղապետը գնում էր քուռակ ձիով, իսկ նրա կինը հեծած էր քուռակի մայրը—մի թոյլ և վտիտ զամբիկ։

Ճանապարհին նրանք պատահեցին մի սատանայի, ծերունու կերպարանքով, աղքատի նմանութեան հագնուած։ Մօտենալով մեր ճանապարհորդներին, դև-ծերուկը սայթաքեց ու վայր ընկաւ և դառնալով դէպի գիւղապետը, սկսեց գանգատուել, որ ինքը բոլորովին ուժասպառ եղած է, և խնդրեց, օգնեն իրան։ Սա իսկոյն ձի-

ուց վայր թռչելով բարձրացրեց նրան և խոր-հըրդաւոր աղքատն, իբրև վարձատրութիւն, առաջարկեց գիւղապետին ամեն բան, ինչ որ վերջինս կըցանկանար։

—Ինձ ոչինչ հարկաւոր չէ. միայն մի բան եմ ցանկանում. այն է՝ եթէ կարողանայի հասկանալ բոլոր կենդանիների լեզուն։

—Բաց բերանդ,—ասաց աղքատը։

Նա բացեց, և ծերուկը փչեց դէպի նրա բերանը։ Այդ օրից գիւղապետն սկսեց հասկանալ Եթովպիայում գտնուղ բոլոր կենդանիների լեզուն։

Սատանան կամաց-կամաց անհետացաւ, իսկ նրանք գնացին առաջ։

Այդ միջոցին յանկարծ լսում է գիւղապետը —որի կինը ոչինչ չէր հասկացած եղելութիւնից,—որ քուռակն ասում է մօրը. «Պայր, կամաց գնա, ես արդէն յոգնեցի եւ չեմ կարող հասնել ետեից»։

—Ամօթ չէ՞ քեզ, որ այդպիսի բան ես ասում, — պատասխանում է զամբիկ-մայրը,— միթէ չես տեսնում իմ վրայի ահագին ծանրութիւնը, որ ես կրում եմ առանց գանգատուելու։

Լսելով այս խօսակցութիւնը, գիւղացին իսկոյն վայր թռաւ իր ձիուց և առաջարկեց այն

իր կնոջը, որ սա թողնէ զամբիկն ու հեծնի սրան: Կինը տեղափոխուեց, բայց և իսկոյն ուզեց իմանալ ամուսնուց այս ձիափոխութեան պատճառը: Բայց վերջինս չէր կարող ասել կնոջն այս բանի պատճառը, որովհետև սատանան մահւան սարսափով արգելել էր նրան՝ այս բանն ուրիշներին պատմելու: Իսկ կինը թախանձում էր,— «եթէ չասես՝ այլեւս չեմ սիրիլ քեզ»:

Այրն սկսեց աղաչել ու համոզել, և ասաց, որ եթէ այս բանը պատմելու լինի, այնուհետև ինքն իսկոյն կըմեռնի: Բայց կինը,—որ մի շատ հետաքրքրուող անձնաւորութիւն էր,— չարունակում էր թախանձել. «Ասա՛. իսկ վերջը կարող ես մեռնել»:

Այն ժամանակ ամուսինն ասաց. «Չաս բարի; գնանք դեռ տուն, առաւօտն աքաղաղը կանչելուն պէս կըպատմեմ քեզ ամեն բան ու ինձս կըմեռնեմ»: Բայց կինը հաւատացած էր, որ ամուսինը չի մեռնիլ:

Առաւօտեան երբ աքաղաղը կանչեց, գիւղապետն լսեց, որ շունն ասում էր աքաղաղին.

—Ի՞նչպէս դու համարձակւում ես երգել, քանի որ մեր տէրը մեռնելու է պատրաստւում:

—Մեր տէրը յիմարացել է, պատասխանեց աքաղաղը:

—Ի՞նչպէս թէ յիմարացել է, հարցրեց շունը:

—Այո՛, յիմարացել է, որ խաբւել է սատա-

նայից։ Նրան ոչինչ չի լինիլ, եթէ իր գաղտնիքները կնոջն յայտնէ։ Սատանան խաբել է նրան, որ ամեն մարդ չի հասկանալ անասունների լեզուն։

Եւ իսկապէս յայտնեց կնոջը, բայց ոչինչ վնաս չըստացաւ։

II

Հէնց այս գիւղապետը մի անգամ պատահմամբ լսեց, որ գիւղում աշխատող իր գոմէշներն ասացին իրանցից ոչ հեռու կանգնող մի էշի.

— Բա՛րև, եղբայր, ի՞նչպէս են գործերդ։

— Է՛հ, բարեկամ, մի լաւ բան չըկայ։

— Դու բախտաւոր ես, բարեկա՛մ,— նկատեց գոմէշներից մէկը,— ես, ընդհակառակն, ինքզինքըս չատ վատ եմ զգում. ամբողջ օրը պարտաւոր եմ տիրոջս արտերը հերկել։

— Ուրեմն ի՞նչու մի քիչ չես խաբում նրան,— ասաց էշը։ Ինքզինքդ հիւանդ ձևացրու ու վայր ընկիր, և տէրդ չի ստիպիլ քեզ աշխատել...

Տանուտէրը լսեց նրանց խօսակցութիւնն ու միտքը պահեց։ Հետևեալ օրը գոմէշը վճռեց կատարել էշի խորհուրդը։

Առաւօտեան երբ ծառան ներս մտաւ ախոռ գոմէշը լուծի տանելու, տեսաւ, որ կենդանին

հիւանդ վայր է ընկած ու բոլորովին կարողութիւն չունի վեր կենալու։ Այն ժամանակ ծառան դնաց տիրոջը պատմելու եղելութիւնը. տանուտէրն էլ պատւիրեց լծել գոմէշի տեղ՝ խորհրդատու—էշը և ծեծել, նրան մինչև արիւնը ամբակներն իջնի, եթէ չուզէ լուծը քաշել։

Ծառան կատարեց տիրոջ հրամանը և գնաց արտը հերկելու։ Էշն ստիպւած էր ամբողջ օրը սաստիկ ծեծի տակ արօր քաշել։ Նա երեկոյեան վերադառնալով տուն, տեսաւ, որ գոմէշը, սուտ հիւանդ ձևացած, դեռ չարունակում է պառկել ու սրտի նեղութիւնից հարցըրեց.

—Ի՞նչպէս անցկացրիր օրդ, սիրելի բարեկամ։

—Դու իմ փրկիչս ես,—պատասխանեց գոմէշը.— առաջ ես անընդհատ աշխատում էի, չնորհիւ քո ցոյց տւած ճանապարհի,—որով ես մինչև անգամ կարող եմ ընդմիշտ ազատւել,—այսօր ինքդինքս չատ լաւ եմ զգում։

—Թէև այդ ուղիղ է,—պատասխանեց էշը, բայց ես պէտք է ասեմ քեզ, որ այսօր, դաշտում աշխատած ժամանակս, ես մի խօսակցութիւն լսեցի քո մասին...

Գոմէշն սկսեց երդմնացնել էշին, խընդ-

րել, որ սա պատմէ նրան՝ իր լսածը: Այն ժամանակ էլն ասաց.

—Գիտցած լինիս, բարեկամ, որ մեր տէրը հրամայեց ծառային, որպէս զի քեզ տանի ու ծախէ մսավաճառին, եթէ վաղն էլ հիւանդ մնաս:

Այս լսելով, գոմէշն իսկոյն վճռեց ճշմարտութիւնը սիրել և, միւս օրը գնաց դաշտ աշխատելու:

Նիկողայոս Պաւբեանց

Մարդկային կեանքի շրջապատող պայմանների համար կենդանէ խօսքի ստեղծագործութիւնն այն աստիճան մի կարևոր անհրաժեշտութիւն է ներկայացնում, որ, համեմատաբար, գարգացման աւելի ստոր աստիճանի վրայ գտնուող ժողովուրդներն անգամ իրանց մէջ չունենալով միևնոյն ժամանակ գրական աշխատութիւններ առաջ բերող առանձին ուժեր,—այնուամենայնիւ տալիս են ժողովրդական ստեղծագործութեան նմուշներ—ինչպէս անհրաժեշտ նիւթ ապագայ գրականութեան:

Ժողովրդական այս տեսակ հնարագործութիւնները, առհասարակ, վերին աստիճանի անմեղ, իրանց կազմուածքով անպաճոյճ և միևնոյն ժամանակ լեցուն են լինում որոշ հայեացքներով, ընդ սմին և խորին մտքերով:

Աղբիւրի ներկայ համարում տպած Եթովպական երկու փոքրիկ զրոյցը Աֆրիկայի ժողովրդականն գրականութիւնից, շարադրուած են խորին ճշմարտութեամբ: Այս պատմութիւնները գրի առնուած է Ելթովպիայում, տեղական լեզուով, Աֆրիկայում ման եկած յայտնի իտալացի ճանապարհորդ Ա. Զէքքի (Antonio Geochi), և, համարեա, բառացի թարգմանուած է իտալերէնից, որի ժամանակ տպագրութեան համար մի-երկու անյարմար կէտեր դուրս ձգուած են:





Մ Չ Ա Կ Ն Ե Ւ Ա Ղ Ա Ւ Ն Ի Ք

(Մանկապարտեզի երգ.
գերմաներեն)

Մ՚չակն ունի աղաւնէատուն,
Բայց՝ աղաւնիք կ՚երթան հեռուն,
Ձանոնք ի՞նչպէս թող բռնէ։
Ի՞նչպէս կ՚ելնէ բլուրն ի վեր,
Թէև չունի նա թեւեր.
Ձանոնք ի՞նչպէս թող բռնէ.
Ո՛հ, ի՞նչպէս, ո՛հ, ի՞նչպէս,
Ձանոնք ի՞նչպէս թող բռնէ. հա՛, հա՛։

Հոն են կարծեց, հոն գլնաց ան,—
Կրկին փախա՛ն և հեռացան.
Ձանոնք բռնել չկրցաւ։
Մ՚չակը քալեց ու նաև
Շատ վազվզեց հև ի հև.
Դարձեալ բռնել չկրցաւ. հա՛, հա՛։

Տուն գնա, մշակ, թէ ոչ նորէն
Աղաւնիները քեզ կը ծաղրեն.
Ձանոնք բռնել չես կրնար։
Անոնք արդէն տուն թըռան,
Եւ թառելով ձողին վրան՝
Իրենց փետուրքն յարդարեն։
Յարդարեն, յարդարեն,
Իրենց փետուրքն յարդարեն. հա՛, հա՛։

Ե. Թ. Պալասեան

Ա Ր Ո Ւ Ն—Հ Ա Ր Ո Ւ Ն

—

չ՝ դեռ հողը-ջուրը չի ծնել Արուն-Հարունի պէս հարուստ և չի էլ ծնիլ։ Նա իր անթիւ գանձով անուն հանեց, իր ոսկիների հնչիւնով թնդացրեց ողջ աշխարհը։ Նա քաղցածներին հաց էր տալիս, կարօտեալներին փող էր բաժանում և ամեն անցնող գնացողի համար իր տան դուռը միշտ բաց էր պահում իր սրտի նման։ Գիշատիչ թռչուններին անգամ նա միս էր ուղարկում անապատները։ Թռչունները առատ-առատ ուտում էին միսը և ողորմի տալիս Արուն-Հարունի հոգը։ Արուն-Հարունը իր մի ձեռքով փող էր վաստակում, իսկ միւսով փող էր բա-

ժանում: Նա բաժանում էր իր ոսկինները, ամեն օր բաժանում, բայց նրա դանձարանը, Սուրբ Նախավկայի վանքում գտնւած ձէթի կարասնե- րի նման, լիքն էր միւում: Նրա գանձարանը մի անսպառ աղբիւրի էր նման, որից ինչքան վեր- ցընում էին, վերցնում, բայց դարձեալ միշտ լիքն էր միւում: Մեր պապերը (ողորմի իրանց) միշտ ասում էին, որ Արուն-Հարունի գանձը մինչև օրս էլ կայ: Արուն-Հարունը զգալով իր մա- հի մօտենալը, թաղել, թագցրել է գետնի տակ իր գանձը, վրան էլ նշով է դրել, որ ոչ ոք չըգտնի. իսկ ով որ գտնի, ոչ մխիթարւի: Բայց հին ժամանակւայ մի աչքածակ թագաւոր, որի գանձարանը լի էր ոսկով, արծաթով, մտքումը դրեց, որ անպատճառ գտնի Արուն-Հարունի գանձը: Արուն-Հարունի մեռնելուց յետոյ դա- րերը էին անցել, երբ այդ թագաւորը մի օր կան- չեց իմաստուն մոգերից մէկին և նրան ծածուկ հրամայեց որոնելու և մի կերպ գտնելու հնուց թագցրած գանձը: Մոգը չւարած այդպիսի հրա- մանից, գլխակոր դուրս գնաց քաղաքից, եկաւ դաշտը, նստեց մի քարի վրայ և սկսեց մտածել: Խեղճ մոգը մտածում էր, մտածում, բայց խելքը ոչինչ չէր կտրում: Ախր նա ինչպէս գտնի Արուն- Հարունի գանձը, որտեղից ճարի, որ թագաւորն էլ նրանից գոհ մնայ? իսկ եթէ չըգտնւի, վայ

թէ թագաւորը բարկանայ ու կտրել տայ նրա գլուխը: Մոգի նստած տեղից մի փոքր հեռու թռչունները հաւաքւել էին և միմեանց հետ զրոյց անում:

—Գիտես, խնամի ջան,—ասաց մի թռչուն միւսին,—այն քարի վրայ նստած մարդուն թագաւորը հրամայել է գտնելու Արուն-Հարունի գանձը:

—Ձըգիտեմ,—պատասխանեց միւս թռչունը,—ես խամ չեմ, ես լաւ եմ հասկանում մարդկանց սրտերը և գաղտնիքները:

Այդ րոպէին մի տերտեր էր անցնում, որ լաւ հասկանում էր թռչունների լեզուն: Տէրտերը լսելով թռչունների խօսակցութիւնը, մօտեցաւ մոտայուղ մոգին.

—Բարի ողջոյն:

—Օրհնեա տէր—պատասխանեց մոգը, գլուխը բարձրացնելով:

—Աստած օրհնի. երևի, նրա համար ես մտածում, որ թագաւորը քեզ հրամայել է գլտնելու Արուն-Հարունի գանձը, հ՞ա:

—Հրամայել ես, տէրտէր,—ասաց զարմացած մոգը,—իսկ դու որտեղից գիտես այդ բանը, քանի որ այդ հրամանը միայն ինձ է յայտնի, սէկ էլ թագաւորին: Քեզ ո՞վ պատմեց այդ գաղտնի

հրամանի մասին։ Տէրտէրը փոխանակ պատասխանի, խորհրդաւոր կերպով ժպտած և մեծ բարով ասաց։

Իսկոյն մոգը գնաց արքունիք, ներկայացաւ թագաւորին և ասաց.

—Թագաւորն ապրած կենայ, ես անկարող եմ կատարել քո հրամանը. բայց կարող եմ միայն մատնացոյց անել մի մարդու. եթէ նա էլ չկարողանայ գտնել Արուն-Հարունի գանձը, կընշանակի, որ քո հրամանը յաւիտեան կմնայ անկատար։

Թագաւորը հրամայեց կանչել մոգի մատնացոյց արած տէրտէրին։ Տէրտէրը համաձայնուեց կատարել թագաւորի հրամանը, միայն այն պայմանով, որ Արուն-Հարունի գանձից նրան բաժին տան այնքան, ինչքան որ կըքաշի կշեռքի մէջ մարդկային աչքը։

—Մարդկային աչքի քաշից հարիւր անգամ էլ աւելի կըտամ, ասաց թագաւորը տէրտէրին,—ի՞նչ կըքաշի մարդկային աչքը, շատ-շատ մի քանի մսխալ։ Այդ մեծ բան չէ, ես խոստանում եմ հարիւր անգամ աւելի...

Տէրտէրը թագաւորից խնդրեց երկու հարիւր ուղտ, հարիւրը բարձած մսով, հարիւրն էլ—ջրով, խաչակնքեց և ճանապարհ ընկաւ։

Նա անցաւ շատ լեռներ ու ձորեր և վերջը հասաւ անապատը, որտեղ ոչ ջուր կար, և ոչ մարդկային բնակութիւն։ Շուրջը միայն աւազ էր և փոքրիկ քարի կտորներ։ Երեք օր թափառելով այս անապատում, նա պատահեց այն թլուչուններին, որոնք ապրում են հինգ հարիւրից մինչև հազար տարի։ Տէրտերը բարձած ուղտերից վերցնում էր մսերը և թափթփում թռչունների առաջ։ Թռչունները ագահութեամբ կտցահարում էին միսը, փորները կշտացնում և միմեանց հետ հանաք ու պրոյց անում։ Տէրտերը լսում էր նրանց խօսակցութիւնը և իրան չըհասկանալու տեղ էր դնում։

—Այսքան առատ միս մենք միայն Արուն-Հարունի օրով էինք վայելում,—նկատեց մի թլուչուն միւսին։

—Էհ, էլ մի ասի, որդի,—պատասխանեց մի ղառաւեալ թռչուն,—այն օրից, երբ Արուն-Հարունը գլուխը դրեց բարձին և ոտքերը ձգեց, մենք մի կուշտ փորով միս չենք կերել։ Կարօտ մնացինք առատ մսի։

—Հիւֆ, հիւֆ, Տէր-ողորմեա... կըըը—ասաց մի երրորդ թռչուն, տխուր-տխուր չարժելով գլուխը։

—Իսկ այժմեան հարուստնե՞րը։

—Իսկ այժմեան հարուստները միայն իրանց փորի համար են մտածում. նրանք իսկի իրանց կարօտ եղբայրներին չեն օգնում, ուր մնայ, որ թռչուններին միս բաժանեն: Դեռ չատ անգամ էլ աղքատի մի կտոր հացը խլում են նրա ձեռքից:

—Դէ, ասա՛ թամամ աւազակները են էլի:

—Աւազակներից էլ աւազակ: Ականջդ կանչի, այ Արուն-Հարուն, գլուխդ մէկ վեր բարձրացրու քո դերեզմանից, տես թէ՝ ինչեր են անում հիմիկւան հարուստները:

—Իսկ հետաքրքիր է իմանալ,—ասաց մի թռչուն,—Արուն-Հարունի դանձը հիմա ո՞րտեղ է:

—Ա՛յ, թէ ուզում ես, գնանք ցոյց տամ, այստեղից չատ էլ հեռու չէ:

—Գնանք:

Թռչունները իսկոյն թռան հեռացան: Տէրտէրն էլ հետաքրքրութեամբ հետևեց նրանց:

—Ահա այստեղ է թաղւած, այս գետնի տակ,—ասաց թռչունը:

Այստեղ թռչունները օրհնեցին ու փառաբանեցին Արուն-Հարունի յիշատակը, թռան, անյայտացին հորիզոնում: Տէրտէրը ակռկին ճանապարհ ընկաւ դէպի մայրաքաղաքը:

—Թագաւորին անպրած կենայ,—ասաց նա,

ներկայանալով արքային,—Արուն-Հարունի գան-
ձի տեղը գտել եմ, գնանք դուրս բերենք և տուր
ինձ խոստացած վարձդ:

Երբ գետնի տակից հանեցին գանձը, թա-
գաւորն ասաց տէրտէրին.

—Դու ինձնից խնդրեցիր այնքան ոսկի, ինչ-
քան որ կը քաշի մարդկային աչքը. ես հիմա
հարիւր անգամ աւելի կրտամ քեզ և կը գնաս
գործիդ, էլ ի՛նչ հարկաւոր է կշեռքի մէջ քաշելը:

—Ոչ, թագաւոր, ի՛ւ կոպեկ անգամ չեմ ու-
զում, դու ինձ տուր միայն այնքան՝ որքան որ
պայման ենք կապել:

—Դէ, ես քեզ լաւութիւն էի ուզում անել,
որ չես ուզում, ես էլ կշռել կրտամ:

Թագաւորը հրամայեց դնել կշեռքի մի թա-
թում մի մարդկային աչք, իսկ միւսում ոսկի:
Սկսեցին կշռել: Կշեռքի թաթը լցւել էր ոսկի-
ներով, իսկ մարդկային աչքը դեռ չէր շարժ-
ւում: Թագաւորը մնացել էր ապշած, որ այդ-
քան ծանր է քաշում աչքը: Արուն-Հարունի ամ-
բողջ հարստութիւնը դրեցին կշեռքի մէջ: Կշեռ-
քի չղթաները կտրւում էին ծանրութիւնից, բայց
դարձեալ աչքը չէր շարժւում:

—Տէր ողորմեա—բացականչեց թագաւորը
—այս ի՛նչ հրաշք է: Ոսկու ահագին կոյտեր

ենք դիզել կշեռքի մէջ, բայց աչքը չի բարձրանում: Մեղայ քեզ, Աստուած, այս ինչ օլին է... կանչեցէք այս րոպէին բոլոր գիտնականներին և իմաստուն մոգերին, թող չուտով ինձ բացատրեն այս գաղտնիքը:

—Հարկաւոր չէ, — ասաց տէրտէրը,—ես միայն այսքանը կասեմ, որ եթէ քո թագաւորութեան բոլոր գանձերը և քո ողջ հարստութիւնդ աւելացնես Աբուն-Հարունի գանձին, դարձեալ կշեռքի թաթը մարդկային աչքի հետ միասին երբէք տեղից չի շարժուիլ:

—Բայց ի՞նչպէս անենք, որ այս անիրաւ թաթը բարձրանայ:

—Ես քեզ կըսովորացնեմ մի միջոց, որով շատ չնչին ծանրութեամբ կարելի կը լինի կշեռքի թաթը բարձրացնել... միայն թագաւոր, դու ինձ խօսք տուր, որ Աբուն-Հարունի մի կոպեկին չըտիրանաս, այլ ամբողջ գանձդ բաժանես աչխարքիս աղքատներին:

Թագաւորը համաձայնուեց: Այն ժամանակ տէրտէրը առաջարկեց թագաւորին գետնից վերցնել մի պտղունց հող և ածել մարդկային աչքի վրայ: Հէնց որ թագաւորը հողը ածեց աչքի վրայ, յանկարծ կշեռքի թաթը աչքի հետ միասին վերև բարձրացաւ, և հաւասարակշռութեան

համար համարեա դարդակեցին կչեռքի միւս թաթը։

—Տեսնում ես, թագաւորն ապրած կենայ. —նկատեց տէրտէրը,—մարդուս աչքը միշտ անկուշտ է լինում. ինչքան որ հարստութիւն տաս մարդուն, դարձեալ նրա աչքը չի կշտանալ, թէկուզ արար աշխարհի գանձերը և հարստութիւնները հաւաքես, դարձեալ մարդուս ծակ աչքը դժգոհ կըլինի և ծանր կըկշռի, միայն մի պտղունց հողն է կշտացնում. նրա բաժինը միայն մի պտղունց հողն է, որ յաւիտեան վաղելով նրան, պահպանում է նրա իսկական հաւասարակշռութիւնը։

Թագաւորը իսկոյն մատը կծեց, հասկացաւ տէրտէրի տուած այդ դասը և էլ ձեռք չըտուեց Արուն-Հարունի հարստութեանը։ Այդ օրից անցաւ թագաւորի աչքածակութիւնը և իր եղածով գոհ մնաց։ Նա տէրտէրի ձեռքը պաչեց, նրան ճանապարհ գցեց և իսկոյն հրամայեց Արուն-Հարունի գանձը բաժանել աղքատներին։

Ծարուխիւն Թումանեան

Ա Հ Ե Ռ Ո Ր Խ Ն Ձ Ո Ր Ե Ն Ի

Նէր Խ.-ի

—

Եկար տարին, ընդ եկաւ,
Նոր գարուն է մայիսեան,
Եւ իմ այգին զարդարեցաւ
Ծաղիկներով անընման։

Կանաչ-կարմիր կոկոնները,
Ինչպէս խարեր բանգագին,
Փոխրիկ, մատաղ տերեւները
Երիտասարդ ծառերին։

Ամբողջ այգում ուրախութիւն
Նոր կեանք, նոր յոյս տարածած...
Շրմեռային մեղեդութիւն,
Կարծես, բընաւ չի եղած։

Միայն այգու մի անկիւնում—
Անզարդ, անշուք, մենաւոր,
Կիսակենդան լաց է լինում
Խընձորենին ալեւոր...

Ո՛չ մի կոկոն, ո՛չ մի տերեւ
Նորա անկեանք ճղներին...
Ախ, ի զուր ես, գարնան արեւ,
Մրխիթարում մեռնողին...

Ջ. Բալուեան

ՆԵՒԵՑՏ ԲՈՑՑ

(Ժուկովսկուց)

1. Նաւապետի հիւանդութիւնը.

Վաճառականութեան «Պեղուզա» նաւը, որը լողում էր Լոնդոնից դէպի Բոստոն, կառավարում էր նաւապետ Բոպլը: Նա մի հմուտ նաւապետ էր. բայց բարի մարդ չէր. իր հպատակներին աստիկ ճնշում էր և ինքն էլ անամօթ, անառակ, չար և ամենատեսակ սրբութիւնները հայհոյող մի մարդ էր, այնպէս որ նաւի վրայ բոլոր ծառայողները դրան ատում էին: Վերջապէս պատրաստ էին ապստամբութիւն գարթեցնել և նաւապետը պէտք էր շատ դժարութիւնների հանդիպէր... Բայց Աստուած ուրիշ տեսակ վճռեց: Յանկարծ նաւապետը սաստիկ վրտանգաւոր հիւանդութեան ենթարկուեց. նաւի կառավարութեան գործը յանձնուեցաւ նաւի առաջնորդին, իսկ հիւանդը, ամենից անարգուած, ընկած էր նաւի մի սենեակում: Նաւի ծառայողները վճռել էին, որ նրան թողնեն առանց օգնութեան, որպէս զի նա մեռնի ինչպէս ժանտախտով հիւանդացած, և այդ վճիռը յայտնեցաւ նրան չար արհամարանքով և ծիծաղով: Արդէն չորս օր էր, որ նա հիւանդութիւնից չարչարուած, ընկած էր մենակ և ոչ մէկը չէր համարձակուում մտնել նրա մօտ, որ գոնէ նրա չորացած լեզուն մի կաթիլ ջրով զովացնէ, կամ թէ նրա վայր ընկած գլուխը

բարձի վրայ դնէ, կամ թէ մի բարի խօսքով նրա հիւանդ հոգին քաջալերէ: Նա միայնակ էր և զարհուրելի կերպով ըմպաստում էր նրան մահը:

2. Ինչպէս Րոբերտի մասնակցութիւնը թեթեւացնում է նաւապետի հոգին:

Հիւանդը, յանկարծ մի անգամ, լսում է, որ մէկը մտաւ իր մօտ և մի փայփայուն ձայն ասաց նրան. «Ի՞նչպէս էք դուք, նաւապետ»:

Այդ մանուկ Րոբերտն էր, տասներկու տարեկան մի երեխայ. նա շատ էր խղճում նաւապետի դրութեան վրայ: Այս Հարցին, հիւանդը պատասխանեց դառնութեամբ.—Դու ինչ դործ ունես: Կորիր հեռու: Սակայն միւս օրը երեխան նորից մտաւ սենեակը և հարցրեց. «Ինչ է հարկաւոր, ձեզ պ. նաւապետ»:—Դո՛ւ ես այդ, Րոբերտ: Չազիւ լսելի ձայնով հարցրեց հիւանդը:

«Ես եմ. նաւապետ»:—Ախ, Րոբերտ, ես տանջեցի ամբողջ դիշերը:

«Թողեցէք ինձ, լսանամ ձեր ձեռքերը և երեսը, դուք կարող էք դրանով մի քիչ զովանալ»: Հիւանդը նշան անելով գլխով ցոյց տւեց իր համաձայնութիւնը: Րոբերտն էլ, ցոյց տալով նրան իր սիրոյ զգացմունքը, հարցրեց.

«Կարո՞ղ եմ ես, նաւապետ, սափրել ձեզ»: Նրան այդ էլ թոյլ տւեց:

Յետոյ Րոբերտը հիւանդին զգուշութեամբ բարձրացրեց և ուղղեց նրա բարձերը. վերջապէս, քաջալերելով, ասաց. «Հիմա ես ձեզ կրտամ թէյ»: Հիւանդը Րոբերտի ամեն առաջարկութիւններին հանգստութեամբ յօժարւում էր. նա խոր հառաչանքով նայում էր երեխային տխուր ժպիտով: Հաւատացած լինելով, որ իր ստորադրեալներից ոչ մի դիմութիւն չը պէտք է յուսալ, սրտի չարութիւնով նա վճռեց ոչ մէկի հետ մի խօսք անգամ չըխօսել: «Աւելի լաւ է մեռնել հարիւր անգամ, մտածում էր նա, քան ընդունել նրանց բարերարութիւ-

Աշխարհից հեռացած

նը»: Բայց երեխայի սիրելի հոգացողութիւնը, շարժում էր նրա բոլոր ներքին զգացմունքները, նրա անհաշտելի հոգին կակղացած էր և նրա առաջւայ, կատաղի տխրագին աչքերից արտասուք էր հոսում:

3. Ինչպէս է Նաւապետն զգում խղճի ծանրութիւնը:

Բայց նրա օրերն արդէն համարած էին. ինչպէս երևում էր, նա թուլացած էր և վերջապէս հաւատացած, որ իր կեանքի թելն արդէն բարակացած է: Նրա հոգին պատում էր զարհուրանքով, երբ նա միանգամայն երևակայում էր մահը և յաւիտենականութիւնը. զարհուրելի ոյժով զարթեց նրա մէջ խիղճը: Բայց նրա երկաթի հոգին, չէր հպատակվիլ խղճին, նա լուռ կրթողէր աշխարհը, չարացած, ոչ մէկի հետ չըհաշտուած, եթէ նրան յանկարծ չըզարթնեցնէր Աստուծոյ ուղարկած երեխայի ձայնը: Եւ ահա մի անգամ, երբ Ռոբերտը մտնելով նրա մօտ հարցրեց. «Ի՞նչպէս էք զգում, Նաւապետ»: Նա հառաչում էր յուսահատութեամբ.—Ա՜խ, Ռոբերտ, ինձ համար ամեն ինչ ծանր է: Իմ կորած մարմինը րոպէից րոպէ աւելի է զգում թշուառութիւն: Բայց արդեօք ինչ կըպատահի իմ խեղճ հոգուն... Ի՞նչ անեմ. ես մեծ անօրէն եմ: Ինձ սպասում է դժոխք, ես ուրիշ ոչնչի չեմ արժան, ես մեղաւոր եմ, կորած եմ յաւիտեան: «Ոչ, Նաւապետ, Աստուած ձեզ կողորմի, աղօթեցէք»:—Անցել է աղօթելու ժամանակը, ինձ համար այսուհետև փրկութեան յոյս չըկայ: Ի՞նչ անեմ ես: Ախ, Ռոբերտ, ինչ կըլինի ինձ: Այսպէս նա իր առաջւայ անզգայ սիրտը խոստովանում էր երեխայի առաջ: Եւ Ռոբերտը ամեն կերպ աշխատում էր արթնեցնել նրա ոյժը, բայց իզուր:

4. Նաւապետը եւ Ռոբերտը կարդում են աւետարան:

Երբ մի անգամ առաջւայ պէս մտաւ երեխան սենեակը, հիւանդը հաղիւ շնչելով ասաց նրան. «Լսիր, Ռոբերտ: Ես մոռացել, որ կարելի է նաւի վրայ գտնել աւետարան, փորձիր, որոնիր»: Եւ ճշմարիտ, որ աւետարան գտնւեցաւ: Երբ որ

Ռոբերտը տւաւ Հիւանդին, սրա աչքերում ուրախութիւն փայլեց: «Ռոբերտ», ասաց նա, սա ինձ կ'օգնէ, այո, կ'օգնէ: Կարդա, սիրելիս: Չիմա կըհասկանամ, ինչի պէտք է սպասեմ և ինչով պիտի փրկւեմ: Նստիր, Ռոբերտ, կարդա, ես կըլսեմ»:

—Ես ինչ կարդամ ձեզ, նաւապետ! «Ըզգիտեմ, Ռոբերտ. ես մի անգամ աւետարան չեմ բռնել ձեռքս. կարդա, ինչ ուզում ես, առանց ընտրելու, ինչ կըբացւի»: Ռոբերտը բացաւ աւետարանը և սկսեց կարդալ և նա երկու ժամ կարդայ: Նաւապետը անկողնուց գլուխը դէպի նա խոնարհեցրեց և մեծ ուշադրութեամբ լսում էր: Նա բռնելով, հետաքրքրւում էր ամեն խօսքով, ինչպէս խեղդւողը աշխատում է բռնել փայտից: Բայց ամեն խօսքում նրա Հոգին զարհուրելի կայծակով լուսաւորւում էր, նա ամբողջովին իր բոլոր անարժանութիւնները Հասկանում էր և Քրիստոս արդարադատութիւնը մօտեցել էր նրան անփախչելի կորուստով, թէև նա լսում էր Փրկչի սուրբ անունը, բայց չէր Համարձակւում փրկութեան Հաւատալ: Երբ նա մնաց միայնակ, ամբողջ այն գիշերը, մտածում էր կարդացածի վրայ, բայց այդ մտքերում նրա Հոգին ուրախութիւն չէր գտնում:

5. Ինչպէս է Ռոբերտը պատրաստում նաւապետի համար:

Մի ւս օրը երբ Ռոբերտը մտաւ սենեակը, նաւապետը ասաց նրան. «Իմ սիրելիս, ես զգում եմ, որ էլ այս աշխարհը չեմ տեսնել. իմ վերջը մօտենում է շտապով, շուտով ինձ կըձգեն նաւի մի կողմը, բայց ես Հիմա դրանից չեմ վախենում... Արդեօք, ինչ կըլինի իմ Հոգուս, խեղճ Հոգուս Հետ: Ա՜խ, Ռոբերտ, ես կորած եմ, կորած եմ յաւիտեան: Չես կարող, արդեօք, օգնել ինձ, աղօթիր, սիրելիս, ինձ Համար: Աղօթել իմանում ես դու»:— Ոչ, նաւապետ, ես ուրիշ ոչ մի աղօթք չըգիտեմ, բացի «Հայր մերից», ես մօրս Հետ ամենայն օր կարդում էի առաւօտ և երեկոյ: «Ախ, Ռոբերտ. աղօթիր ինձ Համար, չոքիր, խնդրիր, որ Աստած իրագործի իր ողորմութիւ-

նը. Նա քեզ կօրհնէ գրա համար: Աղօթիր, սիրելիս, աղօթիր քո անարգած և անաստած նաւապետի համար»: Բայց Յոբերտը ուշացնում էր և Հիւանդը խնդրում էր նրան և համոզացնում էր աղաղակով և հառաչանքով. «Երկնաւոր Թագաւոր, ողորմիր ինձ մեղաւորիս»: Եւ երկուսն էլ լաց էին լինում ողբալով: «Ի սէրն Աստուծոյ, չոքիր, Յոբերտ, և աղօթիր ինձ համար»: Եւ խղճահարութիւնով գրաւած, երեխան չոքեց և խաչելով ձեռները աղաղակեց: «Ով իմ, Աստուած, դու ողորմիր իմ Հիւանդ նաւապետին: Նա ցանկանում է, որ ես աղօթեմ քեզ նրա համար, ես չգիտեմ աղօթել: Խղճա դու նրան: Խեղճը վախենում է, որ ինքը պէտք է կորչի, Դու, Աստուած մի թոյլ տալ նրան կորչել: Նա ասում է, որ դժոխք է սպասում նրան. Դու Աստուած, տուր նրան երկինք: Նա մտածում է, որ սատանան կըտիրէ նրա հոգուն, Դու Աստուած, Հրամայիր, որ քո հրեշտակը տիրէ նրան: Ես խղճում եմ նրան, բոլորը թողել են նրան Հիւանդ, բայց ես, մինչև նա կենդանի է, չեմ դադարիլ նրան ծառայել, միայն փրկել նրան ես չեմ իմանում, խղճայ դու նրան, Աստուած, սովորեցրու ինձ աղօթել նրա համար»: Հիւանդը լուած էր, երեխայի անկեղծ անմեղութիւնը, որով աղօթում էր նաւապետի համար, մտել էր նրա ամրողջ հոգին: Նա ընկած էր անշարժ, սեղմելով ձեռքերը, կոխելով գլուխը բարձերի մէջ և արտասուքը հոսում էր նրա աչքերից հեղեղի պէս: Յոբերտը, վերջացնելով աղօթքը, հեռացաւ, շարժուած՝ զգացմունքով. Հազիւ շունչը քաշելով, երկար միջոց նա մնաց նաւի վերի յարկում և թեքուած նայում էր ալիքներին, նաւի մի անկիւնում: Երեկոյեան, երբ նա վերադարձաւ Հիւանդի մօտ, մինչև գիշերը կարդաց նրա համար աւետարան և նաւապետը անպատմելի քաղցրութեամբ լսում էր նրան:

6. Ջարմանալի տեսիլ

Երբ որ Յոբերտը միւս առաւօտը կրկին եկաւ, նայելու նաւապետին, նա յափշտակուած էր տեսնելով Հիւանդի հետ պա-

տահաճ փոփոխութիւնը. անյայտացել էր այն երկիւղը, որ աւելացնում էր նաւապետի երեսի բոլոր վայրենութիւնը, տըրտմութեան ծածկոցի և մահւան դունաթափութեան տակից երեւում էր մի ուրախ, սուրբ մխիթարութիւն. նրա մէջ փայլում էին այն լուսաւոր ողորմութեան ճառագայթները, որոնք իջնում են մեզ մօտ մեր աղօթարար ապաշխարութեան լաց ու կոծին: «Ա՛խ, Յոբերտ!» հանդարտ ձայնով ասաց Հիւանդը, թէ ինչպիսի դիշեր եմ անցրել ես: Ի՞նչ պատահեց ինձ: Ես չեմ կարող, իմ սիրելիս, արտայայտել այն խօսքերով: Լսիր, երբ դու երէկ ինձ թողեցիր, ես ընկայ մի կիսաքնի մէջ, Հոգիս լցւած էր աւետարանի սրբութիւնով, քո կարդացածը Հոգուս մէջ էր, յանկարծ իմ առաջ, այստեղ, ոտքի տակ, ես տեսայ արդեօք ում! Փրկիչ Քրիստոսին, Նա ամրացած էր խաչի վրայ: Եւ ինձ երեւեցաւ, որպէս թէ ես կանգնեցի և սողացի Նրա ոտների տակ և կանչեցի, ինչպէս այն կոյրը, որի մասին դու՝ կարդացիր ինձ մօտ. «Որդի Դաւթի, Յիսուս Քրիստոս, ողորմիր: Եւ այն ժամանակ ինձ երևաց, որպէս թէ ինձ—այո! ինձ, իմ սիրելիս, քո չարագործ նաւապետին—Նա նայեց... Օ, ինչպէս նայեց: Ի՞նչ խօսքերով արտայայտեմ այն հայեացքը: Ես դողում էի, ամբողջ սիրտս լցւեց արիւնով, Հոգիս լցւեց մահւան տխրութիւնով, երկիւղով, բայց յոյսով, ես համարձակւեցայ նայել Նրան...

Եւ ինչ! Նա... այո, Յոբերտ!...Նա ինձ անարգւածիս, երկնային ողորմածութեամբ ժպտաց! Օ՛, ինչ պատահեց այն ժամանակ ինձ! Դրա համար իմ լեզուս խօսքեր չունի: Ես Նրան նայում էի... նայում... և սպասում... Ինչի էի սպասում! չըգիտեմ, բայց իմ սարսափող սիրտս իմանում էր այդ: Եւ Նա խաչից, որ Նրա վէրքերից Հոսած արիւնով ներկւած էր, նայում էր ինձ այնպէս քաղցրութեամբ, այնպէս տրտում և քնքոյշ խղճով... Եւ յանկարծ Նրա շրթունքները շարժւեցան և ես լսեցի Նրա մաքուր, ամբողջ Հոգի թափանցող, քաղցր ձայնը, որ ասաց ինձ. «Քաջալերւիր և Հաւատա!»

Ուրախութիւնից իմ սիրտս պատրաստ էր պատռուել և ես ընկայ խաչի առաջ լացով և գոչումով... Բայց տեսիլքն անյայտացաւ և այն ժամանակ սթափւեցայ և իմ աչքերս բացւեցան։

7. Ինչպէս ներգործեց տեսիլքը Պաւապետի վրայ։

Բայց արդեօք երազ էր այդ։ Ոչ, երազ չէր։ Հիմա ես իմանում եմ. Նա ինձ կըփրկէ, ով ինձ և բոլորի համար ամբացած էր խաչի վրայ. ես հաւատում եմ Նրան, ինչ որ ասաց Նա սուրբ երեկոյեան, կտրելով հացը և աճելով գինին բաժակի մէջ մեղքերը թողելու համար։ Հիմա ինձ զարհուրելի չէ մահը. իմ Փրկիչը կենդանի է, իմ մեղքերս կըթողւին։ Ես էլ չեմ սպասում առողջութեան, և չեմ էլ ցանկանում. ես ղգում եմ, որ շուտով պէտք է բաժանւիմ կեանքից և հիմա ես ուրախ եմ թողնել նրան...»

Այս խօսքի վրայ Րոբերտը, որ մինչև այն ժամանակ լուռ լալիս էր, յանկարծ ողբալով աղաղակեց.—Նաւապետ, մի՛ք մեռնիլ, ո՛չ, դո՛ւք չէք մեռնիլ։ Այս խօսքերին Հիւանդը պատասխանեց ժպիտով. «Մի՛ լար, իմ բարի Րոբերտ, Աստուած երևացրեց ինձ իր ողորմութիւնը և հիմա ես բախտաւոր եմ, բայց ես խղճում եմ քեզ, խղճում եմ, ինչպէս հարազատ որդւոյ, դու պէտք է մնաս այստեղ նաւի վրայ, այս անիրաւ մարդկանց մէջ, միայնակ մի անփորձ երեխայ... Քեզ հետ էլ կըպատահի այն, ինչ ինձ հետ է պատահել։ Ա՛խ! Րոբերտ, զգոյշ եղիր, չըզնաս իմ երկիւղալի ճանապարհով, տեսնում ես, որտեղ է տանում նա։ Քո սէրը դէպի ինձ շատ մեծ էր, իմ սիրելի ընկեր, ես քեզ շատ եմ պարտաւոր, դու իմ երկիւղի ժամիս ուղարկւած էիր Աստուծուց, դու ինձ ցոյց տւիր, ինքդ չիմանալով, փրկութեան ճանապարհը, թող օրհնէ քեզ դրա համար Ամենակարողը! Նաւի վրայ բոլորին էլ ասա իմ կողմից, որ ես նրանցից ներողութիւն եմ խնդրում և ինքս էլ ներում եմ նրանց և աղօթում եմ նրանց համար»։ Ամբողջ

այդ օրը նաւապետը անցրաւ Հանգիստ. Նա ուշադրութեամբ լսում էր աւետարանը: Երբ որ Րոբերտը դիշերը նրանից բաժանուեց, նա օրհնանքով, սիրով և տխրութեան հայեացքով ճանապարհեց նրան մինչև սենեակի դուռը:

8. Նաւապետի մահը:

Միւս առաւօտը Րոբերտը շատ շուտ գալիս է սենեակը. երբ բացում է դուռը, նա էլ չի տեսնում նաւապետին նրա առաջւայ տեղը. նա բարձրացել էր բարձերից, սողալով դէպի այն անկիւնը, որտեղ նրան երևացած էր խաչը. այնտեղ երեսը դէպի պատը դարձրած, կռացած կամարի պէս, ձեռքերը խիստ սեղմած, ընկած էր ծունկերի վրայ: Տեսնելով այդ, ապշած Րոբերտը կանգնեց սենեակի դռան մօտ: Նա նայում է և սպասում, չըհամարձակւելով շարժւել. անցաւ երկու րոպէ և ահա Րոբերտը վերջապէս, շշնջաց հանդարտութեամբ.

«Նաւապետ»! պատասխան չըկայ: Նա երկու քայլ առաջ գնաց և շշնջաց քիչ բարձր. «Նաւապետ»! Բայց բոլորը հանդարտ էր և չըկար պատասխան: Նա մօտեցաւ անկողնուն. «Նաւապետ»! ասաց նա բարձր ձայնով: Ո՛ա աչքւայ պէս բոլորը հանդարտ էր: Րոբերտը ձեռքով կպաւ նրա ուսին, որ սառած էր ինչպէս սառուց: Երկիւղից նա աղաղակեց բարձր ձայնով. «Նաւապետ»! և բռնեց նրա ուսից: Այստեղ նրա մարմնի դրութիւնը փոխւեց. հանդարտութեամբ նա ընկաւ մէջքի վրայ և նրա գլուխը մեղմ կերպով ինքն իրան ընկաւ բարձին. աչքերը փակւած էին, թշերը դունաթափ, տեսքը հանգիստ, իսկ ձեռքերը սեղմած աղօթելու համար:

Այսպէս հանգիստ վախճանւեց նաւապետը, յոյս ունենալով Աստուծոյ ողորմութեան վրայ:

Or. Մարիամ Շահունեան



ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ԻՖԻԳԷՆԻԱՆ

ՏԱԽՐԻԴՈՒՄ

(Եւրիպիդէս)

Այս բոլոր պատմութիւնը Իֆիգէնիան լսելուց յետոյ հաւատաց, որ իսկապէս ղիմացի կանգնածը Օրէստն է, իր մօր փոքրիկ որդին, որին մի ժամանակ իր ձեռների վրայ էր պահում: Նրանք սկսեցին իրար հետ քաղցր զրոյց անել, իրար տեսութեամբ ուրախանալով, պատմում էին այն բոլոր դիպուածները, որ պատահել էին իրարից բաժանուելուց յետոյ: Վերջապէս Պիլատը ասաց.

— Երկար ժամանակով, իրարից բաժանուած քոյր և եղբօր տեսակցութիւնը շատ քաղցր կըլինի, բայց չըպէտք է մոռանալ, որ պիտի մտածել, թէ ինչ միջոցով կարելի է ազատուել այս բարբարոս աշխարհից:

—Իմ քոյր Էլեքտրան ինչպէս է ապրում, հարցրեց Իֆիգենիային:

—Նա շուտով կամուսնանայ Պիլատի հետ, որին այստեղ ես տեսնում:

—Բայց քո ընկերը ո՞րտեղացի է, ովքեր են նրա ծնողները:

—Փոկերացի Ստրոփիի որդին է. նա մեր բարեկամն է, որովհետև մայրը Աբէի աղջիկն է և իմ անձնուէր ընկերն է: Օրէստը քրոջը պատմեց Տաւրիդ գալու պատճառը և պատմութիւնը վերջացրեց հետևեալ խօսքերով.

—Այժմ, օգնիր մեզ, քո՛յր, այստեղից դիցուհու պատկերը փախցնելու, որովհետև նա միայն կարող է բժշկել իմ ցաւը և այն ժամանակ դու միայն կարող ես Սրգոս հասնել, թէ չէ ճանապարհորդութեան ժամանակ կարող ենք այնպիսի դժբախտութեան հանդիպել, որ բոլորս կըդժբախտանանք:

Իֆիգենիան երկար մտածելուց յետոյ ասաց.—Այդ գործի աջողութեան համար երկար մտածեցի: Երկրիս թագաւորին այսպէս կասեմ, թէ այս օտարները սպանել են մօրը, ուստի նախքան սրանց զոհելը՝ պէտք է որ ծովի ջրով մաքրուեն. նոյնպէս կաւելացնեմ որ սրանք դիպել են դիցուհու պատկերին. նա և ես պիտի ջրով մաքրուի: Դիցուհու պատկերը իմ ձեռով պիտի մաքրեմ, բացի ինձանից ոչ ոք չի կարող նրան մօտենալ: Այսպէս մենք կըմօտենանք նաւին: Դու և նախօրօք պիտի ամեն բան պատրաստես:

Վերջացնելով խօսքը՝ Իֆիգենիան սկսեց Անահիտին աղօթել.

—Ամենաղօր դիցուհի, սրանից շատ տարի առաջ դու ինձ Աւլիտայից անվնաս այստեղ փոխադրեցիր. այժմ էլ, թէ ինձ և թէ նրանց, որոնք այս բոպէիս ինձ հետ են, փոխադրիր Յունաստան, որպէս զի քո եղբօր Ապոլլոնի բոլոր մարգարէութիւնները կատարած լինին: Աղաչում եմ, որ Թոյլ տաս քո պատկերը փոխադրել դեղեցիկ Աթէնք քաղաքը:

Այդ րոպէին Թոմաս Թագաւորը եկաւ իմանալու համար, թէ արդեօք օտարականներին զոհել են, թէ ոչ։ Իֆիգէնիան ասաց, որ ուղարկուած զոհերը անարատ չեն։

—Այդ ինչպէս լմացաւ, հարցրեց Թագաւորը։

—Դիցուհու պատկերը տեղիցը շարժուեց և ձեռներով երեսը ծածկեց։

—Օտարականները ինչ մեղք ունեն։

—Դրանք սպանել են իրանց հարազատ մօրը։

—Ո՛վ, զարմանք։ Մինչև անգամ մենք բարբարոսներս այդպիսի բաներ չենք անում։ Ի՞նչ ես մտադիր դրանց անելու։

—Նախ զոհելը, հարկաւոր է մաքրել։

—Ջովի, թէ՞ աղբիւրի ջրով։

—Ջովի. ծովի ջուրը մարդուս ամեն կեղտերը մաքրում է։

—Չատ լաւ։ Ջովը հեռու չէ. այ այստեղ, տաճարի մօտն է գտնւում։

—Բայց պէտք է մարդկանցից հեռու տեղ ընտրել։

—Ինչ գիտես, որտեղ ուզում ես՝ ընտրիր, ես արգելած գործի մէջ չեմ միջամտիլ։

—Դիցուհու պատկերը նոյնպէս պիտի մաքրել։

—Ի հարկէ, անկասկած, եթէ այդ մայրասպանները ձեռներով պղծել են պատկերը։ Լաւ, դրա համար ինչ մտադրութիւն ունես։

—Պէտք է, զերիների աչքերն ու ձեռները կապած տաճարից դուրս բերել։ Պահապանները պիտի ընկերակցեն ինձ։ Խիստ հրամայել պիտի արձակուի, որ քաղաքի բոլոր բնակիչները տանից դուրս չըգան։ Եւ դուք պիտի տաճարում մնաք, կրակը մաքրելու համար։ Երբ տաճարի մօտով օտարականներն անցնեն՝ գլուխդ հագուստով պիտի ծածկես։ Եթէ մենք ուշանանք, վնաս չըկայ, դու հանգիստ եղիր։

—Որքան կամենաս, այնքան ուշացիր, միայն կատարիր այն բոլորը, ինչ որ հարկաւոր է, ասաց Թագաւորը։

Իֆիգէնիան առաջ գնաց և քայլերն ուղղեց դէպի այն-

տեղ, ուր Օրէստի նաւը խարիսխ էր ձգած: Օրէստը և Պիլատը, զինուորներով շրջապատուած, հետևում էին Իֆիգենիային: Երբ քիչ էր մնացել մինչև ծովափ հասնելը, Իֆիգենիան պահապաններին հրամայեց շղթաների ծայրը իրան տալ, իսկ իրանք մնան այնտեղ, որովհետև նրանք չըպէտք է տեսնեն այն բոլորը, ինչ որ օտարականների վրայ պիտի կատարուի:

Անցաւ բաւական ժամանակ, բայց Իֆիգենիան չվերադարձաւ: Պահապանները սկսեցին կասկածել, թէ մի գուցէ օտարականները սպանել են Իֆիգենիային: Սակայն չէին համարձակւում գնալ ծովի մօտ. վերջապէս երկար սպասելուց յետոյ վճռեցին, որ բոլորը միասին գնան ծովի մօտ: Ծովի մօտ հասնելով տեսան, որ նաւի խարիսխը բարձրացրել են և մօտ 50 նաւաստիներ առաջ են մղում: Օտարական երկու երիտասարդները կապանքներից ազատ կանգնած են ծովի մօտ և սպասում են նաւի մօտենալուն: Այդ բանը պահապան զինուորները տեսնելով գոռում-գոչումով յարձակուեցան նրանց վրայ:

— Ո՞վքեր էք դուք, ինչու էք տանում մեր քրմուհուն և դիցուհու պատկերը:

Օրէստը պատասխանեց.

— Ես Օրէստն եմ, և իմ քրոջն եմ տանում.

Պահապանները աւելի խիստ յարձակուեցան սրանց վրայ. աշխատում էին Իֆիգենիային ազատել, բայց նաւաստիները այդ բանը տեսնելով՝ շուտով նաւից օգնութեան հասան: Ոչ նաւաստիները և ոչ պահապանները զէնքեր չունէին. նրբանք բռունցքներով էին կռւում: Նաւաստիները ուժեղ լինելով՝ պահապաններին հալածեցին: Պահապանները նաւից հեռանալով, սկսեցին քարեր արձակել նաւի վրայ:

Օրէստը, Իֆիգենիային ուսերի վրայ դրած, ծովի մէջ նետուեց և լողալով մօտեցաւ նաւին: Իֆեգենիան դիցուհու պատկերը ձեռին Օրէստի հետ միասին նստեցին նաւը: Պիլատը

նաւաստիներին խրախուսում էր և նրանք բոլորը մի ուժով նաւավարում էին նաւը: Քանի որ նաւը նաւահանգստումն էր, բոլորը հանգիստ էին, բայց երբ նրանք մտան արձակ ծովի մէջ, սաստիկ հողմ բարձրացաւ, ծովը ալեկոծւեց և ալիքները նաւը մօտեցրին ծովափին:

Պահապանները այդ բանը տեսնելով, իսկոյն վազեցին Թոաս Թագաւորի մօտ և պատմեցին բոլոր եղելութիւնը: Թագաւորը իսկոյն և ետ սուրհանդակներ ուղարկեց, որ բոլոր քաղաքացիներին յայտարարեցին օտարների և նրանց ընկերների հետ կռւելու համար պատրաստ լինել: Դեռ ցօրքը չբհաւաքւած, Թագաւորին յանկարծ երևաց Աթէնքի դիցուհին և այսպէս ասաց.

— Թոաս Թագաւոր, Թող Օրէստին և նրա ընկերներին հալածելու միտքը: Նա Ապոլլոնի հրամանով է եկել այդտեղ և ես Պոսէյդոնին համոզել եմ, որ ծովը մեղմացնէ, որպէս զի նրանք հանգիստ հասնեն իրանց տեղը:

— Ես հնազանդում եմ քեզ, դիցուհի, պատասխանեց Թոասը. Թէև Օրէստը տարաւ իր քրոջը և Անահիտի պատկերը, բայց ես չըպէտք է նրան հալածեմ, որովհետև աստւածների հետ չի կարելի կռւել:

Այսպիսով Օրէստը քրոջ հետ անվտանգ հասաւ իր Հայրենի քաղաքը, ուր սկսեց ապրել հանգիստ, ցաւից բժշկւած, ինչպէս որ Ապոլլոնն էր նախազուշակել:

Ա. Բառւբյեան



ԾԻԾԵՌՆԱԿՆԵՐ

(Բեռաճժէ'ից)

Երբած զինուորը Մաւրիտան երկրում,
Զղթաների տակ թեքւած՝ ասում էր.
Է՛յ հաւքեր, ես ձեզ նորից եմ տեսնում.
Ձմռան թշնամի՝ ադամ ծիծեռներ,
Գիտեմ, որ էլի գարնան յոյսերն են,
Որ ձեզ այս աւրող երկիրն են բերել.
Անշուշտ Ֆրանսիան թողել—եկել էք,—
Ախր իմ երկրից մի խաբրիկ չունէ՞ք...

Երեք տարուց վեր ձեզ եմ աղերսում,
Որ մի յիշատակ բերէք ինձ համար
Է՛ն հովտից, որտեղ իմ կեանքը խաւար՝
Ինձ ապագայի յոյսով էր գգւում.
Այնտեղ մի ափում՝ լէյլաղի տակով
Ուր գետն է հոսում անոյշ մրմունջով,
Դուք մեր խրճիթը գիտեմ տեսել էք,—
Ախր այն հովտից մի խաբրիկ չունէ՞ք...

Ով գիտէ՝ ձեզնից մէկը ծնել է
Մ՛յն կտուրի տակ, ուր ես կեանք առայ.
Է՛յ հաւքեր, ձեր սիրտն այնպէս շարժւել է,
Յաւել էք անբախտ մօր սիրոյ վրայ...
Ա՛խ, նա մեռնելիս կարծես թէ մէկ-մէկ
Մօտեցող քայլիս ձայներն է լսում,

Ականջ է դնում և լաց է լինում.—
Ախր այդ սիրուց մի խաբրիկ չունէք...

Պսակուեց տեսնես իմ անուշ քոյրը,
Տեսէլ էք արդեօք այն հարսանքում
Դուք մեր տղերանց հարսնևւոր խումբը,
Որ անուշիկիս գովքերն են երգում.
Եւ մատաղ կեանքի այն ընկերներին
Որ մշտ հետս էին կուսի դաշտերում.
Տեսնես բոլորը դարձան գիւղ, ասէք,—
Այդքան ընկերից մի խաբրիկ չունէք...

Գեորգիկ Գեմիրճեան

ՆԱՒԹԸ

III

Բալախանու նաւթահանքերի հորերից նաւթը հոսում և թափւում է երկաթէ առանձին աւազանների կամ քարէ պատերով փոսերի մէջ, իսկ այստեղից խողովակների միջով մղւում է դէպի Բաքու, մօտ տասը վերստի վրայ գտնւող «Սեւ-Քաղաքի» կերոսինի գործարանները, ուր նրանից պատրաստում են կերոսին, բենզին, սկիպիտար, դանազան լուղեր, որոնք գործածւում են մեքենաների լուղելու համար: Քաքրած, սպիտակ նաւթը (կերոսինը) կամ լցւում է ահագին տակառների նմանուելիւն ունեցող վագոնները (վագոն-ցիստեռն) և մեր Անդրկովկասեան երկաթուղով տեղափոխւում է Սև ծովի ափին գտնւող Բաթում քաղաքը, իսկ այնտեղից՝ շոգենաւներով աշխարհի ամեն կողմը. կամ թէ լցնւում է յարմարաւոր շոգենաւակներ և փոխադրւում է Կասպից ծովի Հիւսիսային ափի մօտ, Վոլգայի գետաբերանում, գտնւող Հաշտարխան քաղաքը, իսկ այստեղից՝ Վոլգա գետի վրայ գտնւող Նիժնի-Նովգորոդ և ուրիշ վաճառաշահ քաղաքներ: Այս քաղաքներում հսկայական աւազաններ են շինւած. դրանց մէջ միլիոնաւոր փութ նաւթ



Բայախանի. Նաւթի փչակացեր (*եր.* 428)

կարող է պարունակվել: Այս քաղաքներից նաւթը երկաթուղով, նոյնպէս առանձին վագոնների մէջ, տարածւում է ամբողջ Ռուսիայում կամ անցնում է արտասահման:

Նաւթի մշակելուց յետոյ գործարաններում թանձր ու սև հեղուկ է մնում—նաւթային մնացորդներ, որ նոյնպէս կարելի է վառել: Առաջ այդ մնացորդները անպէտք բան էին համարում, բայց հիմա նրանով շոգենաւերի, շոգեկառքերի և գործարանների հնոցներն են վառում:

IV

Երբ Բագւում սկսեցին խփել նաւթի առաջին շատրւանները, ամենքը սկսեցին հորեր փորել: Հատերը իրանց վերջին կոպէկներով նաւթային հող էին գնում և փորձում էին իրանց բախտը: Հատ անգամ մի որևէ կէս տարւայ ընթացքում երեկւայ աղքատը առաջնակարգ հարուստ էր դառնում...

Առաջին մեծ հորը այստեղ փորել է, եթէ չենք սխալւում, յայտնի դրամատէր Միրզոյեան 1873 թւականին: Այնուհետև շատ ընկերութիւններ և անհատներ, մեծ մասամբ հայեր, ձեռք զարկին նաւթային գործին, և վիշկաների ու շատրւանների թիւը արագութեամբ մեծացաւ, մէկը միւսից աւելի մեծ, աւելի փառահեղ. և այժմ Բալախանի, Սաբունչի և Ռամանի գիւղերի միջի տարածութիւնը և շրջակայքը ծածկւած են այդպիսի բուրգերի մի վիթխարի անտառով: Այդ ամբողջ նաւթային շրջանը—առասպելական կեղտով՝ մի մռայլ քաղաք է ներկայացնում, ուր գիտութիւնը և դրամը միացած՝ հրաշքներ են գործում և որի անկիւններում մինչև այժմ կուչ եկած մնացել են վերև յիշած թրքական գիւղերը, որոնց իսկական բնակիչների խելքը, պէտք է նկատել, կառավարութիւնից դէնը չի անցել: Բագւից մինչև Սաբունչի և ապա մինչև Սուրախանի՝ երկաթուղու ճիւղ է տարած, որով մարդատար գնացքը անցուդարձ է անում օրական հինգ և աւելի անգամ: —Նաւթի նշանաւոր հանքեր կան և Բագւի հարաւային կողմը գտնւող Բիբի—Հէյբաթում:

Աւելորդ չեմ համարում նկատել, որ մեր նաւթի համաշխարհային գործի զարգացման մէջ մեծ դեր են խաղացել հայերը, մանաւանդ Ղարաբաղի հայերը: Այդ գործում պատկառելի տեղ են բռնում՝ Ֆատուրեան, Շահգեդանեան, Մանթաշեան, Ղուկա-

սեան, Մելիքեան, Ադամեան և այլն: Բայց, պէտք է առանձնապէս շեշտենք, նաւթային գործին մեծ զարկ են տուել, մանաւանդ, շէդացի Նոբել եղբայրները:

Յաւելով պէտք է ասեմ, որ նաւթի արդիւնաբերութիւնը, մեր Հայրենի երկրի Հարստութեան այդ մեծ աղբիւրը, աստիճանաբար ընկնում է եւրոպացիները ձեռքը: Նախ՝ մեծ հանքեր առաւ Ռոտշիլդը, որ իր Հարստութեամբ յայտնի է ամբողջ աշխարհում, իսկ այժմ անգլիական ընկերութիւնները են կազմւել, որոնք նաւթային հանքեր են ձեռք բերում:

Վերջացնելով խօսքս հազիւ նաւթի մասին, պէտք է ձեր փափուկ սիրտը ցաւացնեմ, իմ մատաղ ընթերցողներ: Նաւթարդիւնաբերողները, մանաւանդ նրանց հանքերի և գործարանների կառավարիչները, որ ուսում առած մարդիկ են, շատ վատ են վարւում այն տասնեակ հազարաւոր բանւորների հետ, որոնք միլիոններ են վաստակում մի քանի անհատների համար: Իրանք մեծ մասամբ հայեր են, որոնց մէջ շատ կան ձեզ պէս վոքրահասակ երեխաներ... Այդ բանւորների մեծ մասը Ղարաբաղի գիւղերից են, այն գիւղերից, ուր ծնւել ու սընւել են այդ «կառավարիչների» մեծ մասը: Աղքատութիւնն ու թշւառութիւնը քշել, բերել են նրանց Հայրենի անմահական լեռներից և գցել այդ պարոնների ձեռքը, որոնք, սակայն շատ վատ են վերաբերւում դէպի իրանց եղբայրակից գիւղացի մշակները: Նրանք միայն իրանց յարմարութիւնների և գրպանի մասին են մտածում. օրինակ՝ կառավարիչը, շատ անգամ առանց ընտանիքի, միայն մի մարդ ապրում է 5—6 սենեակներից բաղկացած բնակարանում, իսկ բանւորները, ցերեկները ծխի, մուրի, կեղտի ու թոզի մէջ, սոսկալի պայմաններում աշխատելուց, անասելի տանջանքներ կրելուց յետոյ՝ գիշերները տասնեակներով թափթփւած են լինում մի հիւղում, անասելի կեղտի մէջ... Դեռ քանի-քանի մշակներ են գոհւում հրդեհների ժամանակ կամ մեքենաների տակ մնալով՝ ջախջախւում, մեռնում ու այդպիսով իրանց ընտանիքների «վիզը ծուռ թողնում» գիւղերում. քանիսն են խեղաթիւրում իրանց մարմինը և ոչ մի նպաստ չըստանալով միլիոնատէրերից՝ կորստեան մատնւում ամբողջ ընտանիքներով...

Մի կողմից գիտութիւն, էլեքտրական լուսաւորութիւն, հեռախօսի խիտ ցանց, միլիոններ, անսպառելի հարստութիւն...

իսկ միւս կողմից դաւնուլթիւնների անվերջ ծով... Եւ այդ բոլորի պատճառն այն է, որ այնտեղ, ուր առաջ պաշտում էին կրակը, այժմ պաշտում են փող անունով մի ուրիշ, աւելի դաժան աստծու... Գոնէ օրինակ վերցնէին եւրոպացի նաւթարդիւնաբերողներից, որոնց բանւորների դրութիւնը համեմատաբար աւելի լաւ է:

V

Առհասարակ մեր Կովկասը շատ է հարուստ նաւթով: Բացի Ապշերոնեան թերակղզուց՝ նաւթային հանքեր մինչեւ այժմ երեւացել են Հիւսիսային Կովկասում գտնուող Գրոզնոյէ անունով քաղաքի մօտ, Գանձակի նահանգի Ջիւանշիր գաւառի Նաւթալան անունով տեղում, Թիֆլիսի մօտի Նաւթլուղում, Սղնախի գաւառում, Ձամախու շրջակայքում, Դաղստանում եւ այլ տեղերում: Ասում են, թէ Ձամախում յաճախ պատահող երկրաշարժի գլխաւոր պատճառը նաւթից գոյացած ստորերկրեայ գազրն է: — Նաւթալանի անմշակ, սեւ նաւթը վաղուց տարածւում է գիւղական ազգաբնակութեան մէջ եւ առատ նիւթ մատակարարում գիւղական նաւթաճրագին. բացի դրանից՝ Նաւթալանը յայտնի է, իբրեւ բուժավայր, որտեղ բժշկւում են ոսկրացաւ ունեցող հիւանդները: Նաւթլուխի եւ Սղնախի գաւառի նաւթը դեռ չեն սկսել արդիւնաբերել, իսկ Գրոզնոյի նաւթը ահա մի քանի տարի է բաւական մեծ հռչակ է ստացել: Այստեղի արդիւնաբերութեան հիմքը դրել է Հախվերդեան, որի ջանքերով եւ զոհողութեամբ է սկսուել նշանաւոր չափով նաւթ արտադրել Գրոզնոյում, ուր երբեմն՝ Բալախանու նման՝ նաւթի ահագին շատրւաններ էլ են խփում:

VI

Երկրագնդի վրայ մի ուրիշ անկիւն էլ կայ, որը նոյնքան հարուստ է նաւթով, որքան Բագուն: Նա գտնւում է Հիւսիսային Ամերիկայում, Պենսիլվանիա շտատում (նահանգում): Այնտեղի նաւթը աւելի շուտ են գտել՝ քան մեր երկրինը: Հէնց այնտեղից էլ մաքրած, սպիտակ նաւթը առաջին անգամ տարածւեց զանազան երկրներում. Ռուսիա էլ հասաւ: Այն ժամանակ մեր երկրում նաւթ քիչ էին հանում եւ մաքրելու եղանակը դեռ չըգիտէին, այդ պատճառով էլ բոլոր հարուստ մար-

դիկ «ամերիկական» նաւթ էին վառում, որը ոչ հոտ ունի, ոչ ծուխ և աւելի պայծառ է վառւում:

Ամերիկայում նաւթը բոլորովին պատահաբար գտան: Աիշտ է, վաղուց նկատել էին, որ երբեմն գետնի տակից մի ինչ որ իւղոտ բան է դուրս գալիս, բայց ոչ ոք չէր գիտէր, որ Պենսիլւանիայում թագնւած է նաւթի անսպառելի հարստութիւնն: 1859 թւականին Դրէկ անունով մի ազարակատէր (գիւղատնտեսութեամբ պարապւող մարդ) Օ'յլ-Կրեկ անունով գետի գեղանկար ափին սկսեց հոր փորել, բայց իր որոնած ջրի փոխարէն՝ յանկարծ գետնի տակից դուրս հոսեց գերազանց նաւթ: Եւ բախտաւոր Դրէկը անսպասելի կերպով հարստութիւն դիզեց: Նա սկսեց ուրիշ հորեր փորել. բոլորը արագութեամբ լցւում էին նաւթով, իսկ մի քանիսից նաւթը առուների նման էր հոսում: Հետաքրքիր մարդիկ մեծ բազմութեամբ գալիս նայում էին այդ չըտեսնւած բանին և Օ'յլ-Կրեկի անբնակ ափերը յանկարծ կենդանացան:

Մի քանի ամսից յետոյ մեծ շարժում ընկաւ այդ տեղը: Հեշտ և արագ հարստանալու ախորժակ ունեցող հազարաւոր ագահ մարդիկ երկրի չորս կողմից ժողովւեցին՝ հորեր փորելու: Հազարաւոր հիւսներ տներ ու մադազիններ էին շինում: Մի տարի չանցած՝ այդ անբնակ տեղում կախարդական կերպով մեծ քաղաք շինւեց:

Նաւթային ահագին հեղեղը առաջին անգամ երևաց 1862 թւականին: Նրա տէրը՝ Ջաուն յանկարծ առաջնակարգ հարուստ դարձաւ: Երկար ժամանակ Հոր էր փորում նա. իր բոլոր ունեցած-չունեցածը ծախսեց, բայց նաւթ չըդտաւ: Պրացիների նաւթը աղբիւրի նման էր քլքլում: Նա էր միայն անբախտը: Վերջապէս, նա բոլորովին սնանկացաւ և յուսահատւեց: Խեղճը ծայրայեղ աղքատութեան մէջ էր ընկել, ցնցոտիներ էր հագնում: Այդ դրութեամբ նա չէր կարող ամբողջ օրերով աշխատել ցուրտ և խոնաւ տեղում: Դողդողալով նա գնում է մի խանութ և իր համար շոր ու ոտնամանի խնդրում պարտքով, բայց հարուստ վաճառականն արհամարհանքով մերժում է նրան: Թշւառ Ջաուն դատարկ ձեռքով վերադառնում է իր հորի մօտ և վճռում է թողնել այդ անձեռնտու գործը. նա կորցրել էր առողջութիւնը և բոլոր կարողութիւնը ծախսել էր այդ գործի վրայ. այդ ապատճառով

աւելի լաւ համարեց մշակ մտնել մէկի մօտ: Խեղճը սկսում է ժողովել գործիքները: Բայց այդ րոպէին հորի միջից մի աղմուկ է լսւում, որ աւելի և աւելի է սաստկանում,—երևում է վաղուց ցանկացած նաւթը. նա դուրս է հոսում հորից, և ոչ մի հնար չկայ կանգնեցնելու կատաղի հեղեղը: Այդ նոր գիւտի լուրը կայծակի արագութեամբ տարածւեց, և ամենքը շտապում էին շնորհ ստանալու բախտաւոր Զաւին: Եկաւ և այն վաճառականը, որը նախընթաց օրը մերժեց մի ղոյղ կօշիկ տալու նրան: Մի խօսքով՝ երեկւայ աղքատը հարստացաւ և ինչ որ ցանկար՝ կարող էր առնել:

Եւ մարդիկ՝ խրախուսւած այդ աջող օրինակից՝ սկսեցին հորեր փորել, գործարաններ շինել: Ոչ ոք չէր խնայում ստորերկրեայ հարստութիւնը. բոլորը չէին կարողանում ժողովել, դուր տեղը շատ նաւթ էր կորչում: Անցաւ 30 տարի, և հիմա արգէն սկսել են լուրջ վախենալ Պենսիլւանիայի ապագայի մասին. ասում են, թէ այնտեղի նաւթը նւազում է և կամաց-կամաց իր տեղը զիջում է մեր նաւթին: Բայց մեր նաւթի հետ էլ շատ շռայլաբար են վարւում. մարդ ակամայ մտածում է—ինչ կլինի, եթէ մեր ստորերկրեայ այդ հարստութիւնը սպառւի: Կարող է պատահել, որ նաւթի ծաղկած արդիւնաբերութիւնն անհետանայ նոյնպէս արագ, ինչպէս արագ զարգացել է, և կերոսինի լամպը իր տեղը զիջէ էլէքտրական լուսաւորութեան:

VII

Նաւթին շատ նման է մի ուրիշ այրւող նիւթ, որը յայտնի է ասֆալտ (կուպր կամ սև ձիւթ) անունով: Այդ թանձր սև խէժը մեծ քանակութեամբ գործադրւում է մայթեր շինելու համար: Նա շատ անգամ դուրս է գալիս նաւթային հանքերի մօտ:

Ասֆալտով հարուստ է Մեռեալ ծովը, որ գտնւում է Սուրբ Երկրում, Երուսաղէմից ոչ հեռու: Դա մի մեծ աղային լիճ է: Նրա մէջ է թափւում Յորդանան գետը: Չատ մռայլ պատկեր ունի այդ Մեռեալ ծովը,—ոչ մի աղային լիճ այնքան մռայլ չէ: Նրա ափերը ծածկւած են աւազով և ձիւնի նման սպիտակ ու մաքուր աղի կոյտերով: Զրկայ մի փոքրիկ թուփ անգամ, որ կենդանութիւն տար այդ մեռած անապատին. ոչ

մի ձայն չի խանգարում գերեզմանայինն լռութիւնը: Տեղ-տեղ ընկած են յորդանանի քշած բերած ծառերը: Նրանց ճիւղերը սւացել են, կարծես կմախքներ լինեն՝ նպատակով դցած այնտեղ, որ աւելի ևս մռայլ տեսք ունենայ այդ անապատը: Լճի մէջ ձուկ չըկայ, միայն գետի քշած բերած կենդանիների պիակներ են պատահում երբեմն: Ոչ մի թռչուն չի թռչում լճի վրայ, ոչ մի գազան չի պատահում նրա ափերին: Նրանից բարձրանում է նաւթի և ասֆայլտի գոլորշին, իսկ շուրջը ընկած են ճահիճներ և հոտած աղբիւրներ: Շատ անգամ են ճանապարհորդները՝ այդ լճի մի ափից միւս ափը անցնելու՝ փորձեր արել, բայց ամենքը խիստ տուժել են և ծանր հիւանդութիւններից յետոյ մեռել են: «Ով թանկ է գնահատում իր կեանքը», ասում են արաբները, «նա չըպիտի ոտք դնէ այդ լճի մէջ»:

Մեռեալ ծովի նաւթը գտնւած է անյայտ ժամանակներում: Այդ նաւթը լճակներով լողում է ափերից բաւական հեռու, իսկ ափերի վրայ կուտակւած են սև ասֆայլտի շերտերը: Սակայն ասֆայլտի մեծ քանակութիւն արդիւնաբերում են ոչ թէ այստեղ, այլ Ամերիկայում, Տրինիդադ կղզու վրայ: Ասֆայլտը հալում ու շաղախում են աւազի հետ և այդ ձևով ստացած խմորից մայթեր են շինում: Բացի այդ՝ ասֆայլտից պատրաստում են պարաֆին անունով՝ մոմի նման մի բան, որով մաքրում են սենեակների տախտակամածները և որից պատրաստում են մեր տօնածառերը զարդարող ճրագները:

Թէ ինչից են գետնի տակին գոյանում նաւթն ու ասֆայլտը, այդ մասին դեռ ոչ մի գիտնական չի կարողանում որոշ կարծիք յայտնել: Ոմանք կարծում են, թէ նրանք գոյացել են կենդանիների և բոյսերի լուծւելուց. ոմանք էլ կարծում են, թէ նաւթը վեր է բարձրանում երկրագնդի միջուկից այն տեղից, ուր գտնւում է հրային զանգւածը՝ հալւած դրութեամբ: Զարմանալին այն է, որ նաւթը ահագին քանակութեամբ գտնւած է միայն երկու տեղ: Թէև ուրիշ երկրներում էլ պատահում են նաւթ ծծած քարեր, բայց ոչ մի տեղ նա դուրս չի խփում այնպիսի շատրւաններով և հեղեղներով, ինչպէս Բագւում և Պենսիլւանիայում:

Ջ. Տէր-Գրիգորեան



ԳՈՒԹԵՆԲԵՐԳ

I

Նուիրեան անյիշատակ ժամանակներում հնարուեցան նշանակները, որոնք դրոշմելով զանազան իրեղէնների վրայ՝ ներկայացնում էին ձայները. այդպիսով խօսքի միջոցով արտայայտուած մարդու միտքը հաղորդւում էր մօտաւորից հեռաւորին, ներկայից անսահման հեռու ապագային:

Ձայների նշանակները կամ գրերը տպաւորելու համար նախ և առաջ գործ էին ածում քար կամ փայտ և առաջին գրիչն էր ամուր երկաթէ քանդակիչ սուր ձողիկը:

Սուրբ գրքից յայտնի է, որ Մովսէս տասնաբանեայ պատուիրանները քանդակել էր երկու քարեղէն տախտակների վրայ: Շուրս հազար տարի առաջ եգիպտացիները ամբողջ պատմութիւններ և աւանդութիւններ էին փորագրում իրանց բուրգերի պատերի վրայ: Յետոյ սկսեցին գրել աղիւսների և մետաղեայ թիթեղների վրայ: Պարիզի ազգային մատենադարանում արծաթաթաւն արճիճի մի տախտակի կտոր կայ, որ հռովմէացիները Քրիստոսի ծննդից հարիւր տարի առաջ գտել են Իս-

պանիայի արծաթահանքերում. այդ մետաղի տախտակի վրայ խոշոր տառերով գրոշմած են երկու ձեռնարկողների անունները: Յոյների ու Հռովմէացիների պաշտօնական դոկումենտները փորագրուում էին քարէ կամ բրոնզեայ տախտակների վրայ ու շարուում էին պատերի երեսով. իսկ եթէ տախտակի երկու երեսն էլ գրած էին լինում, այն ժամանակ կախում էին այնպէս, որ երկու երեսից էլ կարդացւէր:

Ասորեստանում հնարեցին կաւէ տախտակների կամ խոշոր աղիւսների վրայ գրելը, որով կաւէ տախտակների ամբողջ գրադարաններ էին կազմում, ուր թուահամարներով հիմակուայ պէս՝ կարելի էր մի շարադրութիւն ջոկել և կարդալ: Միայն Նինուէի աւերակներից մեր դարում հնախոյզներն այնքան գրած աղիւսներ են հանել, որ նրանց վրայի գրածները եթէ տպագրուէին, կրդաւնար տպած 20,000 in folio երես: Այդ կաւէ տախտակների վրայ գրում էին նրանց թագ ժամանակ. գրում էին սեպագրերով և քաղդէարէն լեզուով, որ Քրիստոսի ծննդից դեռ 1700 տարի առաջ արդէն մեռած էր համարւում: Ասումնականները բուռն ճիգեր թափելով վերջապէս յաջողել են կարդալ այդ սեպագրերը: Չարկ չըկայ ասել, որ կաւային գրքերը շատ ծանր էին ու շատ տեղ էին բռնում. օրինակ թէ որ Times լրագրի մի №-ը գրէինք այդ աղիւսների վրայ, հազիւ տասն մշակ կարող էին տանել նրանց:

Գրածքի աւելի յարմար նիւթ հնարուեց մեր լուսաւորութեան երկրորդ որորանում՝ այն է Եգիպտոսում, դա էր պապիրուսը. պապիրուսը 8-12 ոտնաչափ բարձրութեամբ, թանձր, եռանկիւնի ընով խոտաբոյս է, որ խտութեամբ աճում է Եգիպտոսի, Պալեստինի և Սիկիլիայի ճահճային տեղերում. նրա բնի կեղևները պոկում, նախ թրջում, ապա չորացնում հարթացնում էին ու գրում էին նրա միայն մի երեսի վրայ. պապիրուսի մի քանի թերթեր իրար կպցնելով՝ դառնում էր մինչև երեսուն կանգուն երկարութեամբ մի թերթ կամ մի

ամբողջ գիրք, որ փաթաթուում էր մի փայտեայ գլանակի վրայ և դրուում էր կաշեայ պարկում ու դարանների շարքերի վրայ. այդ ձևով էին կազմում հին գրադարանները: Պատմագէտներն ամենահին պապիրուսը համարում են Քրիստոսի ծննդից 3500 տարի առաջ: Վեղուվ սարի հրաբղխային արտաւիժման տակ թաղուած քաղաքը երբ բացուեց, այնտեղ գտնուեց մի գրատուն 2000 հատոր վերոյիշեալ ձևի յունարէն ու լատիներէն պապիրուսի գրքերով, որոնք ամենքն էլ սակայն ածխացած էին: Պապիրուսի լաւ և վատ տեսակը կար և երբեմն այդ բոյսի հունձը երբ անյաջող էր լինում, շատ նեղութիւն էին կրում և Տիբերիոս կայսրի ժամանակ ժողովրդային ապստամբութիւն իսկ ծագեց այդ պատճառով: Պապիրուսը էժան չէր. օրինակ Յունաստանում Պերիկղեսի միջոցին մի կտոր պապիրուսն արժէր մի րուբլի, որ երկու հարիւր անգամ թանկ է քան այժմեայ անգլիական ամենաընտիր թղթի մի թերթը:

Երկրորդ դարում Քրիստոսի ծննդից յետոյ յոյն ընկաւ պապիրուսի գործող ոստիկանը՝ մագաղաթը կամ պերգամէնտը. կաշին արեւելքում վաղուց ծառայում էր գրելու համար, օրինակ հին պարթևների քրմական գրքերը գրուած էին 1200 եղի կաշիի վրայ: Հրէաները կաշիի այնպիսի երկար փաթաթ էին շինում, որ նրա վրայ տեղաւորուում էր Մովսէսի ամբողջ հնգամատեանը: Մագաղաթի ծագման մասին աւանդութիւն կայ, որ փոքրասիական թագաւոր Էմէն II-ը ցանկանալով մատենադարան հիմնել, չկարողացաւ Եգիպտոսից պապիրուս ստանալ, վասնզի պտղոմէականներն արգելել էին նրա արտահանութիւնը, երկիւղ կրելով, որ իրանց հռչակաւոր մատենադարանին մրցող դուրս կըգայ: Այն ժամանակ Էմէնը հրամայեց իր պերգամ քաղաքում կաշիից գրելու նիւթ պատրաստելու գործարան հիմնել: Մագաղաթը պատրաստում էին այծի, ոչխարի կաշուց, աւելի բարակ ու ազնիւ տեսակը գառան կամ հորթուկի կաշուց: Ամենանուրբ մագաղաթը շինում էին մարդու կաշուց. XIII

դարում Պարիզի մատենադարում եղած մի լատիներէն Աստուածաշունչ գրուած է եղել կանացի, յիրաւի զարմանալի նուրբ, կաշիի վրայ։

Մագաղաթը ի Հարկէ պապիրուսից թանգ էր. ուստի մի անգամ գրուած մագաղաթի վրայից գրերը զանազան հնարներով ջնջում էին և նորից գրում. մեր ժամանակում քիմիական միջոցով կարողանում են դուրս վերարտադրել մագաղաթից հին կամ նախկին գրուածները. այդպիսի ձեռագիրներն այժմ կոչւում են պալիմպսեստներ, որոնք պահւում են Եւրոպայի զանազան գրադարաններում. օրինակ Ս. Պետերբուրգի կայսերական մատենադարանում կայ մի պալիմպսեստ, որի վրայ V դարում նախ գրուած է եղել յունարէն, ապա ասորերէն ու յետոյ վրացերէն։ Մագաղաթի լոյս ընկնելուց գրքերն ստացան այժմեայ իրանց ձևը՝ քառանկիւնի թերթեր մի կողմից կարած։

Ներկայ գործածական թղթի սկզբնաւորութիւնն անյայտացած է խոր հնութեան մէջ։ Ինչպէս յայտնի է, մարդկութեանը բարերարող շատ գիւտեր վերագրում են չինացիներին. վառօդ, կողմնացոյց, բամբակէ թուղթ և այլն բոլորը հնարած են չինացիները. սակայն եւրոպացիները այդ ամենին հասան իրանց խելքով, թէպէտ աւանդաբար պատմում են, որ թղթագործութիւնը Չինաստանից անցել է Թուրքստան, այնտեղից Արաբիա, Իսպանիա և Իտալիա։ Տպագրութեան հնարումից մի քար առաջ արդէն Եւրոպայում կային բազմաթիւ թղթի գործարաններ։ Գրելու գործիքները կամ գրիչները ուղղակի երկաթեայ բիզեր էին, երբ գրում էին տախտակի վրայ. պապիրուսի և թղթի վրայ գրում էին եղեգնով, որ կոչւում էր ղալամ. գրում էին և սագի փետուրով. Եւրոպայում XIV դարից սկսեցին գրել երկաթէ գրչով, որ այժմ համատարած ամբողջ աշխարհում գործածական է։ Սև թանաքի գործածութիւնն էլ շատ հին է և պատրաստւում էր բազմատեսակ նիւթերից։ Յոյներին և Հռովմէացիներին թէպէտ յայտնի չէր տպագրութիւնը, այնու ամենայնիւ հեշտ էր գրքերի շուտափոյթ տա-

բածումը. ամեն գրավաճառ. իր խանութին կից ունէր մի մեծ լուսաւոր սենեակ, ուր երկու երկայն շարքով նստած էին տպագրողները. մէկը բարձրանում էր ամբիոնի վրայ և բարձր կարդում էր հրատարակելի ձեռագիրը, միւսները գրում էին և շուտով ցանկացած օրինակով գրքերը պատրաստ էին վաճառահանելու համար. այդ ձևով հին ժամանակում ձեռագիրը յայտարարական թերթ կամ լրագիր էլ կար, որ ուղարկւում էր հեռաւոր նահանգները և ամեն տեղ կարճ միջոցում իմանում էին նոր վաճառւող գրքերի լոյս տեսնելը: Այս գրավաճառները պահում էին և մի հմուտ գրամմատիկոս, որ սրբագրում ուղղում էր սխալ արտագրած ձեռագիրները. գրանք աւելի թանգ էին գնահատւում. թանգ էին մանաւանդ հեղինակների ինքնաձեռագիրները: Գրավաճառների մօտ բացի գրանից ժողովւում էին խօսելու մատենադիրները, գրաւէրները, և ընթերցասէրներն էլ չէին վարձ վճարելով կարդալ այդ տեղ նոր դուրս եկած գրքերը: Միջին դարերում գրականութիւնն անցաւ արեղաների ձեռքը և մենաստաններն էին ժամանակի մեակ և գլխաւոր գրավաճառները, մատենադարանները և այնտեղ էին կեդրոնացած կրօնաւոր բազմաթիւ արտագրողները: Արեղաները ձեռագիրները զարդարում էին ծաղկենկարներով և պատկերներով ու այդ մասում նրանք հասան զարմանալի շքեղ կատարելութեան: Սակայն արտագրութեան վրայ գնում էր շատ ժամանակ ու աշխատութիւն և գրքերը խիստ թանգ էին, օրինակ մի աստւածաշունչն արժէր հազարից մինչև երեք հազար րուբլի: Երբեմն մի զարդարուն գիրքը փոխւում էր մի ամբողջ կալւածքի հետ: Ընթերցանութեան տւած գրքի համար մեծ վճար էին վերցնում: Միջին դարերում յաճախ մատենադարաններում մատեանները շղթայով բեւեռւում էին սլտին, որ ընթերցողները չըգայթակղւեն մեղք գործել, այսինքն գիրք տանել սեպհականելու համար որ անսովոր երևոյթ չէր:

Միջին և հասարակ դասի համար գրքերը բոլորովին ան-

մատչելի էին. նրանց միակ ուսուցանողն էր քահանան եկեղեցում: Գրքերն ընդհանրացնելու համար անհրաժեշտ էր նրանց ձեռագրական եղանակի արտադրութիւնը վերածել մեքենականի, այսինքն փոխարէն գրելու՝ տպել:

Մարդկութեան համաշխարհային պատմութեան մէջ տպագրութեան հնարումը ամենալուսաւոր էջերից մինն է: Գիտութեան պատմութիւնը մեզ ցոյց է տալիս, որ հանճարեղ գաղափարները և մեծ գիւտերը յանկարծակի, միանգամից չեն լոյս ընկել, այլ աստիճան առ աստիճան, երկարժամանակեայ նախապատրաստութեան պտուղ և ծնունդ են. պարզ նախնական մտքից տակաւ առ տակաւ ծնել են աւելի բարդ մտքեր: Տպագրութեան որպէս նախավերջին մի գաղափարը պիտի յիշենք այստեղ դանազան մանր զարդերի և նկարների փայտի վրայ փորելը և դրոշմելը ձեռով թղթի վրայ, մանաւանդ դա վերագրւում է թղթախաղերի այդ ձևով տպելուն 1300 թւականի մօտերը: XII և XIII դարերում փայտի վրայ փորագրած պատկերներ էին տպում մետաքսէ կտորների վրայ: Յետոյ սկսեցին այդ փորագրած պատկերների տակը խօսքեր ու իրատներ փորագրել. այստեղից արդէն մի քայլ էր դէպի այն միտքը, որ մի ամբողջ երես գրւածք փորագրւում էր փայտի վրայ. այսպիսի ամբողջական փորագրած տախտակներով տպած գրքեր էլ հասած են մեզ, որոնց ամենամեծը 50 թերթից է բաղկացած: Դրանք են մանր աղօթագրքեր կամ դասատետրեր: Այժմ այդ «տախտակով» տպած գրքերը շատ հազւագիւտ են, այնպէս որ անգլիական մի լորդ նրա մի օրինակը գնել է 1500 րուբլիով: Սակայն տախտակով տպելը մեծ անյարմարութիւններ ունէր. օրինակ Աստւածաշունչը տպելու համար հարկաւոր էր հազար տախտակի վրայ փորագրել նրա ամբողջ բնագիրը: Տախտակով տպելը այնուամենայնիւ շատ զարգացաւ և տարածւեց. փոխանակ արտագրողների այժմ կային

վայտի վրայ փորագրողները և տպողները: Ուրեմն փորագրած տառերը կային, միայն նրանք անշնորք էին և իրար կպած. մի քայլ էր մնացել անելու, այսինքն շարժական տառեր հնարելու, նրանց իրար մօտ շարելով՝ մտքեր արտայայտել և տպել: Այդ քայլն անելու բախտն ունեցաւ մարդկութեան մեծ բարերար Յոհան Գուտենբերգը:

II

Յոհան Հենսֆլէյշ Գուտենբերգ ծնել է Մայնց քաղաքում 1396 թուին. նրա ծնողները պատրիցիաներ եին. մօր անունն էր Եղիսաբէթ, որ Գուտանբերգեան տոհմի վերջին շառաւիղն էր. իր ցեղի անունը չքջնջելու համար մայրն իր կրտսեր որդուն տուաւ Գուտենբերգեան տոհմի կոչումը, որ և նա անմահացրաւ: Նրա մանկութեան օրերի մասին ոչինչ յայտնի չէ. անշուշտ նա որպէս հին պատրիցիական տան զաւակ, դպրոց էր գնացել և գիտէր ամենը, ինչ որ այն ժամանակ սովորեցնում էին: Մայնցն ինքնավար քաղաք էր և կառավարւում էր երկու կուսակցութեան՝ որոշ, երկու դասակարգերի փոխ-առ-փոխ իշխանութեամբ. առաջինն էին՝ պատրիցիաներ կամ ազնւականները, երկրորդը բիւրգերներ կամ վաճառական ու արհեստաւոր քաղաքացիները: Նրանց մէջ շատ անգամ արիւնահեղ և քաղաքաւեր կռիւներ էին տեղի ունենում: XV դարու վերջում քաղաքացիները քշեցին ազնւականներին և գրաւեցին նրանց կայքը. Յովհան Գուտենբերգը 20 տարեկան էր, երբ ընդհարումն սկսւեց, կռւին առիթ տուղը էր Թազաւորի Մայնցի միջով անցնելու դէպքը. ազնւականները առաջնութեան իրաւունքը յափշտակեցին և նախ իրանք ողջունեցին Թագաւորին, որի մեկնելուց յետոյ, զայրացած բիւրգերները յարձակւեցան պատրիցիաների վրայ, նրանց ինչերը թալանեցին և իրանց էլ քշեցին քաղաքից: Աքսորւածների թւումն էր և Գուտենբերգի ընտանիքը, որ գնաց

բնակաւորուեց Ստրասբուրգ քաղաքում, սակայն այս չարաբաստիկ դէպքը բարերախտաբար առիթ եղաւ մեծ գիւտի լոյս աշխարհ գալուն, որ կոչուած է վերջնականապէս ազատելու մարդկութիւնը խաւարի ճիրաններից:

Գուտենբերգն իր երիտասարդութիւնն անցուց աղքատութեան մէջ. չքաւորութիւնը ստիպեց նրան թանկագին ակներ յղկելու արուեստը սովորել: Սոյն արհեստաւորներն աշխատում էին և տպելու գործը կատարելագործել. մամուլի պէս մի բան արդէն նրանք էլ ունէին. Գուտենբերգի հանճարը նրանով արտայայտուեց, որ նա եղաւ առաջինը, որ փորագրած տախտակի տառերը հատ-հատ կտրտեց և իրար մօտ կերպ կերպ դասաւորութեամբ շարելով կազմում էր բառեր, նախադասութիւններ. այժմ փոխանակ հազարաւոր մանրիկ տառերով հազարաւոր տեսակ գրքեր կարելի էր տպել:

Ուրեմն Գուտենբերգի ծառայութիւնը կայանում է նրանում, որ մի կտոր տախտակից տառերը կամ գրերը կտրտեց և բաժան-բաժան արաւ: Այդ փորձերը նա արաւ Հաւանականօրէն 1440 թւին. չընայելով այդ գիւտի պարզութեան՝ նա ահագին հետևանքներ ունեցաւ. այս գիւտը լեզուի բնական ճանապարհով էր ընթանում. շարժական ուրիշ տառերը համապատասխան բառակազմող զանազան ձայներին՝ կազմում էին բառեր, նախադասութիւններ, շարադրութիւններ...

Գուտենբերգն աշխատում էր Ստրասբուրգի շրջակայքում մի փոքրիկ վանքում. Ի՞նչ հրաշալի րոպէ էր, երբ այն խաղաղ խցում նա փայտեայ պտիկ ձողիկների վրայ դուրս բերաւ ամբողջ այբուբէնը, ապա ձողիկներն իրար մօտ շարեց, նրանց ծակերով թել անց կացրաւ, պինդ իրար կապեց, այնպէս որ նրանք անշարժ էին. յետոյ մատը քսեց նրանց երեսին, թուղթը դրաւ, ձեռով ճնշեց և զարմացմամբ, զմայլած, հիացած և հրճւանքով, յուզուած տեսաւ, որ ամբողջ այբուբէնը դրոշմուած էր կամ տպուած թղթի վրայ. գրքեր տպելու գաղտնիքը նա գտել էր. նա հասել էր իր բազմամեայ տենչանքին:

Այժմ պէտք էր գաղափարն իրագործել, մարմնացնել նրան։ Սակայն փայտեայ տառերը շուտ էին փչանում, հարկաւոր էր մետաղից ձուլել նրանց. դրա համար դրամ էր հարկաւոր, որ չունէր Գուտենբերգը. ուստի 1445 թւին նա գնաց Մայնց, որ հաղիւ 1450 թւին կարողացաւ Յովհաննէս Ֆաուստ անունով մէկին գտնել, որ համաձայնեց տալ նրան 800 գուլդէն 6 տոկոսով։

1452 թւին Ֆաուստը Գուտենբերգին էլի տուաւ 800 գուլդէն պարտք բոլոր պարագաների գրաւականով և գուտ եկամուտի կէս բաժնով։ Գուտենբերգն այժմ գործը շատ առաջ էր տարել և ձուլել էր շարժական մետաղեայ տառեր։ Պարիզի ազգային մատենադարանում կան Եղիայ Փոնատի այդ միջոցին տպած քերականութեան մի քանի թերթերը, 1454 թւի տպած 23 հատ ինդուլգենցիա։ 1450 թւին Գուտենբերգը ձեռնածուխ եղաւ առաջին Աստուածաշնչի տպագրութեան, որ տևեց ճիշտ տարի. մինչդեռ մեր օրերում Անգլիայում մի օրում շարել տպել, կազմել է ամբողջ Աստուածաշունչը... 1455 թւի օգոստոսի 24-ին նշանաւոր մատեանը լոյս տեսաւ։ Նա բաղկացած է երկու հատորից, իւրաքանչիւրը 317 թերթից. իւրաքանչիւր երեսում կայ 42 տող։ Այդ հռչակաւոր գրքից մնում է այժմ միայն 16 օրինակ, 7-ը մագաղաթի վրայ և 9-ը թղթի վրայ և բոլոր օրինակները գտնւում են Անգլիա և Ֆրանսիա, իսկ Մայնցում և ոչ մի հատ։ 1884 թւին Լոնդոնում այդ Աստուածաշնչի մի օրինակը ծախւեց 40,000 րուբլիով... Շուտով Գուտենբերգին միացաւ մի ճարտար երիտասարդ Շեֆֆեր անունով, որ կատարելագործեց տառերի ձուլելը և գեղեցկացրուց նրանց։ Ֆաուստը իր աղջիկը կնութեան տուաւ Շեֆֆերին, դատարանով իր փողի փոխարէն խլեց Գուտենբերգից տպարանը և փեսայի հետ սկսեց գրքեր հրատարակել։ Նրանք առաջին անգամ տպեցին սաղմոս։ Այս բոպէիս կայ մի գիրք, որ իր ինքնաձեռագիր յիշատակարանով Շեֆֆերը նւիրել է Մաքսիմիլեան կայսրին 1506-ին. նա գրում է. «1450

խ ո ղ ա ճ ո ղ ո ւ մ

թւին Մայնց հաղաքում տաղանդաւոր Գութենբերգը հնարեց տպագրական արուեստը, որ յետոյ կատարելագործելով տարածուեց ապագայում Փաուստի եւ Շեֆֆերի աշխատութեամբ»:

Սակայն Գուտենբերգը յուսաբեկ չեղաւ և աշխարհը առանց բարի մարդկանց չէր. նա նորից գործի ձեռք զարկեց Կոնրադ Գումիրի՝ լուսամիտ անձի օժանդակութեամբ ու հրատարակեց մի քանի մանր գրքոյկներ և 1460 թւին in falio 373 երեսից մի մեծ գիրք—լատինական քերականութիւն բառարանով: Պարտատէրից երկիւղ կրելով՝ Գուտենբերգը իր անունը չէր տալ գրքի վրայ...

Տպագրութեան արուեստը սկզբում խիստ գաղտնի էր պահւում. Փաուստը բանւորներին ուետարանի վրայ երդուեցրաւ, որ նրանք մարդու բան չասեն, իսկ տպարանը գետեղել էր իւր ներքնատներում: Նա սկսեց իր գրքերը Պարիզում ծախել և մեծ հարստութիւն դիզեց, սակայն Պարիզում չըհաւատացին նրա արուեստին, սատանայական գործ համարելով՝ նրան բանտ ղրին, ուր և նա մեռաւ, իսկ նրա փեսան գրկուեց ամեն ինչից, երբ պատերազմի ժամանակ աւերուեց քաղաքը: Գուտենբերգի գրաշարները, որոնց Գուտենբերգի երեխայք են անւանում, տառերը վերցնելով իրանց հետ, ցրուեցին ամեն կողմ և տարածեցին այդ նոր գիւտը:

Մայնց առնելու ժամանակ Գուտենբերգի տպարանը խրնայեցին, չաւերեցին, իսկ իրան Գուտենբերգին՝ տիրող իշխանը մշտնջենական թոշակ նշանակեց. այդպիսով նա իր ծերութեան երեք տարին միայն խաղաղ, ապահով անցկացրեց: 1468 թւի յունուարին Գուտենբերգը վախճանուեց և թաղուեց Մայնցի Գոմինիկեան վանքի հանգստարանում. սակայն նրա գերեզմանն այժմ յայտնի չէ՝ թէ որն է... Մայնց, Ստրասբուրգ, Ֆրանկֆուրդ և այլն Գուտենբերգին արձան են կանգնեցրած: Ձորս անգամ, չորս՝ հարիւր ամեակ 1540, 1640, 1740 և 1840 թւերին տօնել է Գուտենբերգի յիշատակը:

Տպագրութեան գիւտով նոր դարագլուխ է բացւել մարդկութեան համար. նրա միտքն այժմ անարգել, անսահման թռիչք կարող է կատարել:

Տպագրութեան հետևանքները և արդասիքներն անհամար են. դրա մի մեծ օգուտն էլ այն է, որ մեր միտքը ազատւեց կրաւորական դեր կատարելուց, վասն զի նա դատապարտւած էր միայն լսելու, որովհետև գիրք չըկար. իսկ այժմ ամեն ոք կարող է ներգործական կերպով զբաղեցնել իր միտքը. լսելը կրաւորական է, կարդալը ներգործական. երկրորդ եղանակն անհամեմատ աւելի բարեբեր և ազնիւ է, թէպէտ այս ասելով առաջին կերպի նշանակութիւնն ամենևին չի նւազում իր տեղին և ժամանակին:

(Վերջը հետեւեալ համարում)

Ն. Ա. Տ.-Ա.

Ա՛ման եմ գալիս
Դաշտի միջին
Մենակ-մենակ.
Յաւը սիրտս
Ման եմ գալիս
Մենակ-մենակ.
Կռունկների
Ձէնն եկաւ
Երկնքէն.—
Անուշ ձէնը
Սիրտս ընկաւ
Երկնքէն,—
Իմ ցաւս
Ջանս ընկաւ
Այդ ձէնէն.
Ասացի՝
Կռունկներ,
Ղարիբներ,
Ձէն տուիք
Գարունքին
Ու եկաւ.—
Իմ սրտիս
Ձէն տուիք—
Ու չեկա՛ւ.
Գարունքը
Սրտիս մէջ
Ա՛խ չեկաւ,
Կռունկներ.—
Ի՞նչ կըլինի
Ինձ տանէք
Ձըմռոդնէք,
Ինձ մենակ
Դաշտի մէջ
Ձըմռոդնէք,
Կռունկներ...

Ծովի. Կոստանեանց

ԶԻԱՐՃԱԼԻՔ

ԳՐԱԽԱՂԱՑ (ՓՆՏ)

4

ՅԱՆԳԱՒՈՐ ՏՈՂԵՐ

Խաղացողներից մէկը արտասանում է մի ամբողջ տող, որ պէտք է լրացնէ միւսը որևէ յանգաւոր վերջաւորութեամբ։

Օր. 1) *Այստեղ կայ մի խեղճ կատու,*
2) *Թէ որ քեզ մօտ հաց կայ-տու.*
կամ 1) *Ես կըթուչեմ, շատ եմ թեթև,*
2) *Պատճառ — ունիմ թէ ոտ, թէ թև։*

5

ԼՐԱԳԻՐԸ ՄԵԶ ԻՆՉ ԽԱՒԱՐ ԲԵՐԱՒ

«Լրագիրը մեզ ինչ խաբար բերաւ», հարցնում է թաշկինակ զցողը. այս հարցին պէտք է միւսը պատասխանէ մի այնպիսի նախադասութիւնով, որ վերջանայ աւ։ Օր. «Որ մոլեխը ցորենը դէմ կերաւ», որ «անցեալ օրը մի կայսրուհի մեռաւ», «որ քանի օր է մի երեխայ կորաւ», «որ այս-ինչ քաղաքում եկել է սելաւ», «որ մի ծովագնաց լողաց դէպի

հարաւ», «որ գաղթականները մերկ են, քաղցած ու ծարաւ», «որ մեզանից ոչ ոք նրանց շատերին օգնութիւն չ'արաւ», որ մարդկանց սրտերը քար դառաւ», «որ մեր Հայրենի Արաքս գետը մի Հայ գիւղ իր տակն արաւ» և այլն: Ով դանդաղում է պատասխանել և կամ կասէ առաջ արտասանուած բառերը երկրորդ անգամ, վճարում է ֆանտ:

Այս կերպ կարելի է և այլ տեսակի վերջաւորութիւններով սկսել նոյնանման խաղեր, որպէս զի աւելի կենդանի անցնի ժամանակը:

6

ՆԱ ԳՆԱՑ

«Նա գնաց», արտասանում է «թաշկինակ գցողը. իսկ բռնողը հարցնում է. «ինչով», կամ «ինչու»:

Առաջինը պիտի գտնէ մի այնպիսի խօսք, որ վերջանայ միատեսակ: Օրինակ.—«Նա գնաց».—«ինչով»...ձիով: Այժմ երկրորդն է ասում նոյնը և միւսները սպասում իրանց հերթին,—ոտով, կառքով, ֆուրգոնով, սայլով, երկաթուղով, շոգենաւով: «Ի՞նչու»—օգնելու, ուսանելու, տեսնելու, նայելու, ծեծելու, պատւիրելու, պատերազմելու, խնդրելու և այլն:

Սխալւողը վճարում է ֆանտ:

Գ. Բաբուրեանց

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ Ն Ե Ր

—

Առ. ուս. Ար. Տէր-Խաչատրեանց

29) Մի բառ գիտեմ եռվանկեանի,
Որը անուն է մարդու պաշտօնի.
Առաջին վանկը, ընթերցողներ,
Յաճախ գործ են ածում թղթախաղներ.
Երկրորդ վանկը լ տառով

Բայ է անորոշ զէմքով.
Իսկ բառի վերջաւորութիւն
Ունի կրկնակի նշանակութիւն:

Առաջ. նոյնի.

30) Մի բառ գիտեմ երկվանկանի,
Ամեն վանկն երեք տառ ունի.
Եթէ բառը ուղիղ կիսւի,
Երկու գոյական կըստացւի.
Մէկը լինում է մարդու բերանում,
Միւսին չար մարդիկ են ատում.
Եթէ առաջին մասը հակառակ կարդանք,
Այնպիսի մի գոյական կըստանանք,
Որին ոչ թէ ոչ ոք չէ սիրում,
Այլ նրանից ամենքս ենք սարսում:

Ա Ղ Բ Ի Ւ Ր

Բ. ԲԱՃԻՆ

Մ Ե Ր Ը Ն Թ Ե Ր Ց Ո Ղ Ն Ե Ր Ի Ն

Աղբիւրը ներկայ №-ից սկսում ենք հրատարակել ընդարձակ ծաւալով: Աղբիւրի Բ. Բաճինը աւելի կրկայնացնենք, նոյն իսկ առանձին տետրով կը հրատարակենք, ինչպէս տասն տարի սրանից առաջ լոյս էինք ընծայում, եթէ հայ ծնողն ու դաստիարակը դէթ կիսով չափ կամենան ճանաչել իրանց պարտքը դէպի իրանց սանը, զաւակն ու ընտանիքը:

Ի՞նչ շահ հազարաւոր օրինակները տպագրել, ծաւալ, ծրագիրը ընդարձակել, երբ անտարբեր հայ ծնողը չի կամենում սթափւել... Հայ ծնողի, հայ ընտանիքի անտարբերութիւնը վերացնելու գործը, նրա հետ անմիջական շփում ունեցող ինտէլիգենցիայի սրբազան պարտաւորութիւնն է: Ամեն մէկ ինտէլիգենտ երիտասարդ ունի մօտ ընկերներ, ազգականներ, ծանօթներ, որոնց ընթերցասիրութեան հարցը պիտի մօտ լինի նրա սրտին: Մենք շատ ու շատ ընտանիքներ ունենք, ուր կարդալ իմացող երեխաներ ու հասակաւորներ կան, բայց որոնք ոչինչ չեն կարդում բաւի բուն նշանակութեամբ, որոնց համար գրական աշխարհը առհասարակ գոյութիւն չունի: Եւ ընթերցանութիւնից զուրկ լինելով, սրանք մոռանում են իրանց լեզուն էլ, մտաւորապէս բթանում են, սրտով օտարանում են: Հարկաւոր է մի ոյժ, որը դարձնէ այդ կղզիացած ընտանիքներին ուշադրութիւնն իրան մատչելի գրականութեան վրայ, մի օղակ, որ կապէ իրար անհրաժեշտ տարրերը միմեանց հետ: Եւ այդ ոյժը, այդ օղակը մեր ինտէլիգենցիան պիտի լինի, որը սակայն շատ թոյլ ու անընդունակ կերպով է կատարում իր սրբազան դերը: Ուստի ամեն բանից առաջ պիտի սթափւէ այդ տարրը. պիտի նա հասկանայ վերջապէս իր պարտքը, առանց որի նա ոչ մի արժանիք ունենալ չէ կարող: Սպասենք և յուսանք:

ԸՆՏԱՆԻՔ ԹԷ ՊՊՐՈՑ

I

Րուսսոն կարծում էր, թէ դպրոցը չէ կարող բաւարար կերպով դաստիարակել երեխային։ Նրա կարծիքով չէ կարելի մի քանի տասնեակ երեխաներ յանձնել մի կամ երկու վարժապետի հոգածողութեանը, որովհետև երեխաները միմեանց նման չեն։ Նրանք տարբերւում են իրարից ընդունակութիւնների չափսով, հոգեկան ու բարոյական յատկութիւններով և այլն։ Ուստի և չէ կարելի ամենքին չափել միևնոյն չափսերով և ամենքի հետ վարուել միևնոյն եղանակներով։ Ծայրայեղութիւնները մի կողմ թողնելով, մենք էսպէս համաձայն ենք Րուսսոյի կարծիքի հետ։ Ամենաբարեկարգ դպրոցը գլխաւորապէս գործ ունի միջին տեսակի երեխայի հետ։ Օրինակ ուսուցիչը բացատրութիւններ տալիս աշխատում է իր ասածները մատչելի դարձնել մեծամասնութեան, որ միևնոյն է թէ միջին տեսակի երեխայի համար։ Իսկ աւելի անընդունակ երեխաների բերանը շատ քիչ բան է ընկնում ուսուցչի բացատրութիւններից։ Իսկ աւելի ընդունակները, տաղանդները, խիստ ջրալի, ձգձգած են գտնում ուսուցչի դասաւանդութիւնը։ Բոլոր այն կանոնները, վարք ու բարքի ձևերը, որ բարեկարգ դպրոցում ընդունուած են լինում, կարող են համապատասխան լինել մէկի կամ մի ւսի համար։ Իսկ շատերի համար նոյն կանոնները կարող են անյարմար, կամ նոյն իսկ վնասակար լինել։ Շատ անգամ ամենաընդունակ աշակերտները յետ են մնում, կաղում են, թմրում, ննջում են, կարծես հիւանդ լինեն։ Ուսուցիչը նկատում է այդ, բայց չէ կարողանում հաշիւ տալ իրան, կամ թէ անարդար կերպով մեղադրում է երեխայի բարոյական տրամադրութիւնը։ Մինչդեռ գաղտնիքը նրա մէջն է, որ դպրոցի կազմակերպութիւնը ցածր է նրա տաղանդից։ Եթէ

այդ ուղղութեամբ շարունակենք վերլուծել դպրոցական կրթութիւնը, ի նկատի առնելով թէ դպրոցի սահմաններում և թէ նրանից դուրս եղած կենսական բազմատեսակ հանգամանքները, կարելի է խիստ տխուր եզրակացութիւնները հանել դպրոցական կրթութեան մասին, որոնց մէջ դպրոցը ինքն ըստ ինքեան մեղաւոր չէ։ Դպրոցը առանց որոշ սկզբունքների չէ կարող ղեկավարել, օրինակ՝ նա չէ կարող թոյլ տալ, որ իւրաքանչիւր աշակերտ գայ դպրոց, որ ժամին ինքը կամենում է, այլ որոշ ժամ պիտի նշանակուած լինի դասերը սկսելու համար, օրինակ առաւօտեան ժամի 8-ը։ Այն երեխան, որ դպրոցի մօտ է ապրում, ամենայն յարմարութեամբ կարող է ցրոցէ ուրիից մնացած տնից ճանապարհ ընկնել և ճիշտ ժամանակին բազմել նստարանի վրայ։ Իսկ մի ուրիշ աշակերտ, որ մի վերստ հեռու է բնակւում, երբ էլ ճանապարհւում է տնից, դարձեալ շատ անգամ ուշանում է։ Այդպիսի մանր ու խոշոր հանգամանքները անթիւ են։ Պիւհնոյն չէ, թէ մի աշակերտի ծնողները երկու սենեակ ունեն, թէ հինգ, շատ ազգականներ ունեն, թէ քիչ, հայրը արհեստաւոր է, թէ պաշտօնեայ, և այլն և այլն։ Պենք չենք ուզում շատ երկարացնել, որովհետև անշուշտ ընթերցողի համար պարզ է մեր ասածը։ Պիայն աւելորդ չենք համարում նորից շեշտել, որ բոլոր այդ աննպաստ հանգամանքները թուլացնում են դպրոցի նշանակութիւնը, պակասացնում են նրա արժէքը։ Այնպէս որ հրապարակի վրայ դեռ հարց է մնում, թէ արդեօք ազգերի և մարդկութեան աւելի արագ յառաջդիմութեան համար ո՞րն է աւելի լաւ. զարգացնել դպրոցական կրթութեան կազմակերպութիւնը, երկրորդական տեղ տալով ընտանեկան դաստիարակութեան, թէ աւելի լաւ է ընդհակառակն՝ մշակել ընտանեկան դաստիարակութեան ըստ կարելոյն նուրբ ու օգտակար մի եղանակ (մետոդ) և նայել դպրոցի վրայ, որպէս մի լրացուցիչ, երկրորդական հիմնարկութեան վրայ։

Բոլորովին սխալ է այն կարծիքը, թէ դպրոցը և ընտա-

նիքը, երկուսն էլ կարող են հաւասար տեղ բռնել դաստիարակութեան, կրթութեան ասպարիզում: Ո՛չ, այլ մէկը պատճառ պիտի գերազասէ: Դպրոցը և ընտանիքը չեն կարող համերաշխ լինել: Մէկը միւսին կարող է մինչև անգամ վնասել: Դպրոցը ձգտում է միատեսակ դարձնել բոլոր մարդկանց, իսկ ընտանիքը անհատական ինքնուրոյնութեան պաշտպանն է: Չէ կարելի մարդկանց մի կողմից ինքնուրոյն դարձնել, միւս կողմից միակերպացնել, այդ հակառակ է ամենատարրական տրամաբանութեան: Նոյնանման երևոյթներ գոյութիւն ունեն կենսական բոլոր ասպարէզներում: Օրինակ ճարտարապետութեան մէջ: Կան ճարտարապետներ, որոնք կրկամենային մեծամեծ քաղաքները զարդարել բոլորովին սիատեսակ փողոցներով և շէնքերով: Իսկ աւելի բանաստեղծ-ճարտարապետը սիրում է բազմատեսակ փողոցներ և բազմաձև շէնքեր: Մէկ ուրիշ բանաստեղծ (չեմ յիշում որը) վշտանում է Պետերբուրգի փողոցների միատեսականութիւնից. նա իրան բանտի մէջ է զգում, չորս կողմը միատեսակ պատեր տեսնելով: Մարդկային հոգին աւելի բաւականութիւն է գտնում բազմատեսակութեան (ուրեմն ինքնուրոյնութեան) մէջ: Այդ էլ մի նշան է, որ մարդկային սիրտը աստւածային ծագում ունի, որովհետև, օրինակ, ծաղիկների աշխարհի անսահման խայտաբղէտութիւնը ցոյց է տալիս, որ աստւածներն էլ միևնոյն ոգին ունեն... Ինքնուրոյնութեան զարգացման համար անհրաժեշտ է, որ ընտանեկան դաստիարակութիւնը առաջնակարգ տեղ գրաւէ, իսկ դպրոցը դառնայ միայն ուսուցանող, «instruisant» սովորցնող մի լրացուցիչ հիմնարկութիւն: Այդ հարցը, ի հարկէ, սերտ կերպով կապած է առհասարակ ընտանիքի հարցի հետ: Եթէ ընտանիքը պիտի վերջնականապէս քայքայւի և մարդիկ ապրեն ճաշարանական և կլուբային եղանակով, այն ժամանակ ընտանեկան դաստիարակութեան մասին խօսք լինել չի կարող: Իսկ եթէ ընտանեկան կեանքը, ենթարկւելով կատարելագործութեան օրէնքներին, վերակազմւէ և դառնայ մի

մարդկային սրբարան, այն ժամանակ դպրոցականութիւնը կը-
սահմանափակուի և ընտանեկան կրթութիւնը կըստանայ իր
արժանավայել տեղը: Այդպէս կոչուած լուսաւորութեան նախա-
պարութիւնը դպրոցի փոխարէն իր ուշադրութիւնը կըկենդ-
րոնացնէ ընտանեկան կրթութեան վրայ: Հրաւիրում ենք հայ
ծնողներին մամուլի էջերում խորհրդակցել մեզ հետ այդ ան-
պայման կարևոր և բարդ հարցի մասին: Մեզ համար ընտա-
նեկան կրթութեան խնդիրը կեանքի ու մահուան խնդիրը է...

Ս. Թ.

ԸՆՏԱՆԻՔԸ ՈՐՊԷՍ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

—

I

Մի որևէ շինութիւն, թէկուզ մի հասարակ խրճիթ կառուցանելու համար ամենից առաջ անհրաժեշտ է հոգալ հիմքի մասին, հիմքը շինել և այս հիմքը որքան հաստատուն և ամուր լինի, նոյնքան ինքը շինութիւնն աւելի ամուր և դիմացկուն կըլինի: Ի՞նչն է ծառայում իբրև հիմք կրթութեան դժւար և բարդ գործի մէջ: Դժւար չէ իմանալ, որ այդ հիմքը—pեsտաղիճի—պետութեան այս առաջի բջիջը և սաղմը: Այստեղ, ընտանիքումն է առաջի անգամ մանկան մտքի մէջ այս և այն հասկացողութիւնների ու ճաշակը ծնւում, յայտնի սովորութիւններ ու հակումներ ձեռք բերւում. մի խօսքով այստեղ են կազմակերպւում բնաւորութեան այն սկզբնական գծերը, որոնք վերջում որոշ ձև են ընդունում: Ինչպէս ասում է մի ուրիշ տարրեր կ'աւելանան, որոնց ազդեցութեան տակ մանկական հիմնական բնաւորութիւնները կարող է էապէս փոխւել. փիլիսոփայական թուլութիւնը և հիւանդութիւններին տրամադրւելը, ծնողների ժառանգական մեղքերը, ընտանիքի այս և այն սարգ ու կարգը, ընկերները, դպրոցը առօրեայ կեանքի մանրակրկիտ դեպքերի սարսափելի և անյողդողդ ոյժը—այս բոլոր փակտորները կարող են չեզոքացնել երեխայի բնաւորութիւնը: Հայց դա միայն ըստ երեւոյթին է—իսկապէս մանկութեան տպաւորութիւնները այնպէս խոր են և ուժեղ, որ միւս բազմաթիւ ազդեցութիւնները

կարող են բնական հակումները միայն չեղափոխել, նկատելի կերպով կերպարանափոխել, բայց ոչ մի դէպքում չեն կարող նրանց բոլորովին մեռցնել։ Այս ենթադրութեան ճշմարտութեան մէջ համոզուելու համար առանձին աշխատանք և զննողութիւն հարկաւոր չէ, բաւական է որ մարդ միայն իր մանկութեանը դառնայ և ճշտութիւնը ստուգէ իր վրայ։

Եթէ դուք լաւ թափանցէք ձեր բնաւորութեան և ձեզ յատուկ հակումների մէջ, այն ժամանակ կտեսնէք, որ մանկութեան շրջանը ձեզ վրայ իր յայտնի կնիքն է դրել, որ ձեր գիտակցական կեանքի առաջին և ուժեղ տպաւորութիւնները ձեր հոգու մէջ խոր, անջնջելի հետքեր են թողել և որ ձեր սեփականացրած վատ բնաւորութիւններից շատերը ձեղնում այն աստիճան են արմատացել, որ չընայած ձեր, նրանցից ազատելու անկեղծ ցանկութեանը, դուք կատարելապէս չէք կարողանում այդ անել։ Այս բոլորը ծառայում է ինչպէս անհերքելի ապացոյց այն յայտնի մտքին, թէ մենք բոլորս մեր սովորութիւններին ստրուկներն ենք։ Եթէ ծնողները հիմնովին իրացնէին և երբէք աչքից չթողնէին այս մանկավարժական ճշմարտութիւնը, այն ժամանակ, անկասկած, ամեն ջանք գործ կդնէին, իրանցից կախած ամեն բան կանէին—իրանց երեխաներին այնպիսի սովորութիւններ պատւաստելու, որոնք նրանց համար չաճախ սարսափելի դժբախտութեան ծանր բեռ չըդառնային։ Եթէ դուք բարոյականութեան հաստատուն կանոնները, ազնիւ սովորութիւնները և օրինաւոր կենցաղավարութիւնն իւրացրել էք։ ձեր առաջ մի փայլուն իդէալ կայ, որը փարոսի պէս ճանապարհ է ցոյց տալիս և ձեր գործունէութեան համար իբրև չենարան ծառայում—ձեզ համար զարհուրելի չեն ոչ ամբոխի անարդ դատաստանը, ոչ ձեր թշնամիների մեքենայութիւնները և ոչ որև է կենսական փոթորիկներ ու ձախորդութիւններ... Պատահել է ձեզ անտառում տեսնել հին, շատ հին ծառեր, որոնց կեղևը պկսած է, տերևները համարեա թափւած, ճղները կոտրտած, կացնի հարւածներից ճղճղւած։ Պէտք է կարծել, որ այդպիսի վիրաւորւած, հաշմանդամ ծերացած զինւորները շատ վաղուց պէտք է ոչնչանային, մինչդեռ նրանք շատ հանդարտ շարունակում են ապրել և կարծես թէ ոչինչ չի պատահել, այնպէս են իրանց տեղերումը կանգնած։ Ի՞նչն է նրանց պահպանում, ինչն է նրանց ոյժ տալիս մարդկանց և բնութեան ծաղր ու ծանակի դէմ կռւելու։ Գետնում խոր նստած ամուր ճիւղաւորւած արմատներն են նրանց պահպանում։ Ահա և հէնց այսպիսի հոգեկան արմատներն են մեր մարդկային կեանքի համար իբր չենարան ծառայում։ Կարդա-

ցէք շքեղութեանց կենսագրութիւնները, և առանձին ուշ դարձրէք այն երեսների վրայ, որտեղ նշանաւոր մարդկանց հրաշալի մայրերի ղեկավարութեամբ մանկութիւնն է նկարագրւում։ Իսկ մեր հեղինակների նամակները իրանց ծնողներին և այն յօդւածները, որտեղ իրանց մօտիկ մարդկանց մասին են խօսում, որքան սէր, փաղաքշանք և սրտագին ջերմութիւն կայ նրանց մէջ։ Նրանցից մի քանիսը լիքն են այնպիսի սրտաճմլիկ հառաչանքներով, դառն կասկածանքներով և հոգեկան տանջանքներով, որ առանց յուզման չի կարելի կարդալ։ Հաւանական է, որ բոլորն էլ այնպէս բախտաւոր չեն, այսինքն ոչ բոլոր երեխաներն ունեն բարի, սիրող մայրեր և շատ քչերն են բնութիւնից օժտւած անսովոր նրբազգած, խոր ըմբռնող հոգով։ Բայց անկասկած է, որ ամեն երեխայի վրայ՝ ով էլ նա լինէր, ծնողական բռնակալութիւն, ճնշումը, ամեն տեսակ տեսարանները և ընտանեկան կեղտոտութիւնները ընդհանրապէս, ընտանեկան անհամաձայնութիւնները քայքայիչ կերպով են ազդում։ Միւս կողմից չկայ և չի կարող լինել այնպիսի քարացած, արմատացած սիրտ, որի վրայ ծնողական փաղաքշանքը, սէրը և հոգատարութիւնը ոչ մի ներգործութիւն չունենային։ Բոլորը, երեխայի սիրոյ ոյժից և դիւրազգածութեան աստիճանից է կախւած։ Մէկի վրայ ընտանիքը մի տեսակ է ներգործում, միւսի վրայ այլ կերպ, բայց այնպիսի երեխաներ, որոնք ընտանիքից անկախ և նրա կողմից առանց մի որ և է ազդեցութեան զարգանալին—անկարելի է երևակայել։ Տասն տարի սրանից առաջ տողերիս գրողը շատ մանրամասն կերպով խօսում էր այն մանկավարժական միջոցների մասին, որոնք մեր ընտանիքում գործադրւում են։ Անթիւ օրինակների վրայ հիմնւելով, ես աշխատում էի ապացուցանել, որ մեր ծնողները շատ աղօտ հասկացողութիւն ունեն մանկավարժութեան կանոնների մասին, չեն կամենում և կարևոր չեն գըտնում կրթութեան գիտութիւնը ուսումնասիրել և իրանց երեխաներին կրթում են առանց որև է որոշ կանոններով առաջնորդւելու։ Սոյն յօդւածում ես կամենում եմ ընթերցողի ուշադրութիւնը դարձնել ընտանիքի կորստաբեր, անհետք—քայքայող ազդեցութեան վրայ, այն ներքին կարգ ու կանոնների հիմնական օրէնքների և սովորութիւնների մտքով, որոնք մեր ընտանիքներում թագաւորում են և երեխաների համար ծառայում են իբր առաջնորդող սկզբունք։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ես ի նկատի ունեմ այսպէս ասած կըրթւած, ինտելլիգենտ դասակարգի ընտանիքը, որովհետև, օրինակ, մեր գիւղացիների կրթութեան մա-

սին լսօսք էլ չի կարող լինել։ Մանկավարժութեան ինչ օրէնքներ կարող են լինել այնտեղ, երբ մարդիկ իրանց նախնական դրութիւնից դեռ նոր են դուրս եկել։

Ինչ է տալիս մանկավարժութեան տեսակէտից մեր ինտելլիգենտ ընտանիքը և ո՛ւմ է նա դաստիարակում։ Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ մեր ընտանիքի տնային կազմակերպութիւնն այն պայմաններում, որոնցում նա դրուած է և ներկայումս գոյութիւն ունի, վերին աստիճանի անգրաւիչ է, որ չասենք, ուղղակի այլակերպուած է։ Այդ նրանից է առաջ գալիս, որ տղամարդիկ եւ կանայք մեծ մասամբ ամուսնանում են ոչ թէ փոխադարձ յարգանքից եւ շահերի ընդհանրութեան տեսակէտից դրդուած, ոչ թէ նրա համար, որ միասին աշխատեն և իրանց երեխաներին դաստիարակեն բարոյականութեան և յօգուտ հասարակութեան ազնիւ աշխատանքի հոգով, այլ նրա համար, որ պատկառելի դրամագլխի տէր լինեն, ընդհանրապէս այնպիսի սուր շարժառիթների, դրամական շահերի և կեղտոտ կշռադատութիւնների ազդեցութեամբ, որոնք ամուսնութեան սրբութեան հետ ոչ մի կապ չունեն և մանկավարժական նպատակների համար միանգամայն աւելորդ և անպէտք են։ Դժուար չէ հասկանալ, որ այնպիսի ամուսնութիւնը, որտեղ մարդ և կին միայն ծ սակաւարութեան եւ ձեւապաշտութեան գուտ արտաքին կողմով են կապուած, անհամերաշխ են գտնում և յաճախ միմեանց ատում են, — այդպիսի ամուսնութիւնը, ասում եմ, բացի վշտից, արտասուքներից, հոգեկան և բարոյական տանջանքներից ուրիշ ոչինչ չի բերիլ։

Այսպիսի այլանդակ սկզբունքների վրայ հիմնուած ընտանիքը, անթիւ թիւրիմացութիւններ, կռիւներ, անվերջ վէճեր և ամեն տեսակ տեսարաններ առաջ բերելով, ընտանեկան կեանքը մի դժոխք և աներեւակայելի պղծութիւնների և վրդովեցնող չանցանքների աղբիւր է դարձնում...

Դատարկախօսի անուն չվաստակելու համար, թոյլ տուէք «բնութիւնից մի քանի պատկերներ» առաջ բերել։

Ահա ձեզ մանկավարժական աշխարհից մի ինտելլիգենտ ընտանիք։ Մարկը — գինուորական գիմնազիօնի տեսուչ է, յաւակնութիւն ունի մանկավարժական հարցերում իրան հեղինակաւոր կարծելու, առանձին հպարտութեամբ է իրան պահում, գեներալ լինելովը շատ է գոռոզանում և սալոոյի կարմիր աստառովը բաւականին գրգռում է, իրան կարծիքներն ոչ թէ ասում՝ այլ արտասանում է և այնպէս, կարծես Ամերիկան է գտնում, և ամեն բանի ու բոլորի վրայ Լիլիպուտների երկիրը ընկած Գուլլիւերի մեծամտութեամբ է նայում։ Կինը դաս-

տիարակչուհի է; գիտե երաժշտութիւն, աւարտել է ոսկէ մեդալով, քաղաքավարութեան ձևերը և հայեցքները ընդմիշտ պահպանել է։ Չափազանց քաղաքավարի է. փոր խօսքը լսելիս ամաչում և շփոթւում է, ոչ մի համարձակ խօսակցութիւն չի սիրում, իր մարդուն աստւածացնում է, ամեն բանի վրայ նրա աչքերովն է նայում, նրա լսելքովն է մտածում։ Եթէ, օրինակ, ամուսինն ասաց, որ մանկավարժական հարցերի մէջ մտնող բոլոր բժիշկները իրանց գործի մէջ չեն խառնւում, դրա մասին նրանք ոչ մի հասկացողութիւն չունին, որ երեխաները իրանց ծնողներից երբէք խելօք չեն կարող լինել—կընշանակի հէնց այդպէս էլ է. այլ կերպ չի էլ կարող լինել, և ով այլ կերպ է մտածում—«նա յիմար է»։ Գեներալուհին երեխաներ չի սիրում և շատ ամաչում է—թռւ—յղութիւնից, որ կնոջը անհետաքրքիր է դարձնում, դուրս գնալու և աշխարհի ուրիշ բաւականութիւններից զրկում է։

Կարող էք երևակայել, թէ այդ պիսի ծնողների երեխաները ինչպէս են ապրում և շնչում։ Նիհար, գունատ, սակաւարիւն, որոնք իրաւունք չունեն ոչ թէ գատել, այլ և առանց միշտ խիստ, կնճռած հօր թոյլտւութեան խօսել։ Այդ կենդանի, զարդարւած տիկնիկները ինչ որ խեղճ, վախեցած վհատեցուցիչ տպաւորութիւն են թողնում...

Մեր առջևն է մի ուրիշ ինտելլիգենտ ընտանիք. ամուսինը համալսարանական կրթութեամբ է, նահանգական ատեանում է ծառայում, քիչ ռոճիկ է ստանում, եզան պէս աշխատում է իրան սիրուն կնոջը և երեք երեխաներին անչափ սիրում է, իր բոլոր միւս ընկերակիցների նման օրինաւոր ապրելու համար ոյժից ընկնում է, բայց երբէք ծայրը ծայրին չի կարողանում հասցնել և միշտ պարտքերի մէջ խրւած է։ Կինը, թէև գիմնազիստն աւարտել է, բոլորովին դատարկ է, իրան մարդուն բոլորովին չի գնահատում, սակաւ է տանը նստում, իր երեխաներով քիչ է զբաղւում, և այն կարծիքի է թէ ամուսինը պարտաւոր է նրան ձեռքերի վրայ պահել և նրա բոլոր քմապաշտութիւնները կատարել։ Ամուսինն այդ պարտականութիւնները կատարում էր, բայց անբախտ մշակը համբերութիւն չունի մշտական վարձկան լինելու. նա փաղաքշանք, ուշադրութիւն. բարոյական պաշտպանութիւն, գոնէ մի փոքր սէր է կամենում, բայց հէնց այդ է որ չըկայ։ Եւ ահա, խեղճը, առջևում ոչ մի ուրախութիւն և մխիթարութիւն, ոչ մի ելք չըտեսնելով, սկսում է մխիթարութիւնը բաժակի յատակում գտնել, համի է ընկնում, պաշտօնից զրկւում է, աւելի և աւելի է ցածր իջնում, վերջնականապէս կորչում, իսկ նրա հետ միասին կորչում է և ամբողջ ընտանիքը...

Բոլորովին ուրիշ տեսակի է երրորդ ընտանիքը, որտեղ, ընդհակառակը, կրթւած ամուսին և հրաշալի մայր է, իսկ մարդը—մի անպիտան, վատնող և վատաբարոյ արարած է։ Այն ժամանակ, երբ խեղճ, կիսահիւանդ կինը, ամբողջովին և անարգել իր կեանքը ընտանիքին և երեխաներին է նւիրել, միշտ տանը նստած վաղ առաւօտեանից մինչև ուշ դիշեր անդադար աշխատում է, իրան ամեն բանից զրկելով, իւրաքանչիւր կոպէկ խնայում է և միանգամայն քայքայում է իր առանց այն էլ վատ առողջութիւնը,—ամուսինն իր ընկերների շրջանում ուրախ հասարակութեան մէջ զւարճանում է... Կնոջ մի փոքրիկ չանդիմանութիւնը մարդուն սաստիկ կատաղեցնում է և փոթորիկ է առաջացնում։ Անբախտ, սիրուն և խելօք երեխաները ջղային են դառնում, վախեցած փոքրիկ գազանների նման են մեծանում, իսկ խեղճ, տանջւած վարձկան կինը, նախազգալով իր կեանքի մօտիկ վախճանը, տանջւելով լռութեամբ, անվրդով տանում է հոգեկան անհնարագրելի տանջանքը, առանց այրող արտասուքների չի կարողանում նայել ապագայ որբերի վրայ և մոմի նման հանդարտ հալչում է...

Նահատակին թաղելուց յետոյ, նորին բարեննդութիւնը նորից է ամուսնանում գեղեցիկ, բայց արդէն հասակն առած մանկաբարձուհու հետ, որ միանգամայն իր ափի մէջ է ժողովում նրան։ Ինչպէս խոհեմանկ և յաջողակ կին, նա կարողանում է իր մարդու համար մի աւելի լաւ տեղ գտնել։

Վաճառականներից ամեն կարեւոր բաները ստանալով, մանկաբարձուհին լաւ քէֆով ապրում է, իր ամուսնուն միշտ կօշկի տակ է պահում և հոգեկան վատ տրամադրութեան րոպէներում մինչև անգամ նրան ծեծում է. նոյնպէս չի մոռանում խեղճ որբերին էլ ծեծել...

Լինում են և այնպիսի ընտանիքներ, որտեղ մարդ և կին միմեանց արժէն։ Նրանք երկուսն էլ ամուսնացել են, ինչպէս գործունեայ, հաշւով մարդիկ, և մինչև անգամ մի փոքր էլ սիրուց, որի ազդեցութեան տակ կարճ ժամանակամիջոցում քիչ երեխաներ չունեցան, իսկ յետոյ, ինչպէս գործով սաստիկ զբաղւած մարդիկ, նրանք միշտ դրսում էին լինում և միանգամայն ժամանակ չէին ունենում երեխաներով զբաղւել. ժամանակ չըկայ! Երեխաները առանց ծնողական հրսկողութեան, իրանք իրանց, վտանգաւոր անպատկառներ դուրս եկան։ Սիրելի ամուսինները միայն ճաշի և ընթրիքի ժամանակ կարծես թէ դիտմամբ իրար հանդիպում էին նրա համար, որ միմեանց մեղադրեն իրար չըհասկանալու մէջ և այլն։

Ընդհանրապէս սա ընտանիք չէր, այլ մի ինչ որ աւազականոց, որտեղ

թագաւորում էին. մշտական աղմուկ, գոռոցներ, երեխաների կռիւներ և ծնողների հայհոյանքներ։ Սպասաւորները այդպիսի ընտանիքում հրաժարւում էին ծառայելուց, ոչ ոք մի ամսից աւելի չէր դիմանում այնտեղ և այն ժամանակ ընտանիքը կատարելապէս խայտառակւում էր։

Բայց ահա ընտանիք, որտեղ, ընդհակառակը, խաղաղութիւն, հանգստութիւն և հաշտութիւն են թագաւորում, գոնէ օտարի աչքի համար։ Եւ զարմանալի չէ։ Դա կատարեալ ժամանակակից ընտանիք է, որտեղ ամեն ինչ ձևականութեան, քաղաքավարութեան և վայելչութեան վրայ է հիմնւած։ Ամուսինը բարձրաստիճան նշանաւոր մարդ է, նախարարութեան մօտ ծառայող։ Կինն ընտիր շարժումներով կինարմատ է, ամեն կողմով դուրեկան։ Մէծ միջոցներ ունեն, ապրում են արձակ, ժուրֆէկսներ են սարքում, թատրոնում լօժային աբոնըմենտ ունեն։ Նրանց երեխաները շատ չեն— ընդամենը չորս հոգի. կարգին ընտանիքում աւելին ընդունւած չէ, բայց նրանք բոլորը հիանալի, լաւ դաստիարակւած են. օտար լեզուներով հրաշալի խօսում են, աւելի լաւ, քան մայրենի լեզուով, նոյնպէս հրաշալի ածում են զանազան գործիքների վրայ, վարպետութեամբ պարում են, հասարակութեան մէջ իրանց կարողանում են պահել, արտաքին քաղաքավարութեան երևացող կեղևի, խզճալի արտաքին փայլի տակ թագնւած է անհամաձայնութիւն, սառն օտարացումն, փոխադարձ ինտրիգներ, կռպիտ ստախօսութիւն, ցինիկութիւն և ամենաանձարձակ, անամօթ անառակութիւն։ Այդ բոլորը, ի հարկէ, իրան ժամանակն ունի, մինչ աւերւող նորին բարեծննդութիւնը արքունի փողերով չի գրաււի, երբ փորձւած, խորամանկութեամբ խուսափող և ճարպիկութեամբ իրարու գցող դերասանների բոլոր մեքենայութիւնները չբացւեն։ Այն ժամանակ ամբողջ ընտանեկան աղտոտութիւնը երես է դուրս գալիս և գարշելի, խայտառակ կատակերգութիւնը փոխւում է ընտանեկան խիստ փոթորկի...

Այսպիսի օրինակներ ես շատ կբերէի, բայց ենթադրում եմ, որ ոչ մի կարևորութիւն չըկայ, որովհետև առաջ բերած օրինակներն էլ, կարծում եմ, միանգամայն բաւական են, որ ընթերցողը կարողանայ տեսնել,—թէ չաճախ ինչպէս է լինում մեր ժամանակակից ընտանիքի բարոյական մակերևոյթը, ինչ է երբեմն նա մեր երեխաներին սովորեցնում, ինչպիսի կանոններ, ձեռնարկներ և հասարակական իդէալներ է տալիս։

Եթէ դուք երիտասարդ կամ ծեր բախտախնդիրների հանդիպէք, որոնց բնական ձիրքերը խեղդւած են, բնաւորութիւնն այլակերպւած

է, կեանքը ժամանակից շուտ կոտրւած և փչացած— այդ բոլորի պատճառները ընտանիքում, այդ անբախտ մարդկանց մանկութեան մէջ փնտուէք։ Հարց ու փորձ արէք, թէ նրանց ինչպէս են դաստիարակել, և դուք կըտեսնէք, որ նրանք մեծացել և զարգացել են ամենաանյաջող պայմանների և կրթութեան հակամանկավարժական եղանակների մէջ։

Նրանց փոքրիկ մարմինը, նոյնպէս փոքրիկ խելքը, նրբազգած, ընդունակ հոգին համապատասխան կերակուր չըստանալով, շատ են քազցած մնացել և մաշւել։ Ուռնատ, նիհար, սակաւարիւն, վատ կերակրւած, նրանք առանց փաղաքշանքի և քաղցր խօսքի են մեծացել, ինչպէս արեգակի լոյսից զրկւած սենեակի խեղճ ծաղիկը։

Փոխադր. Ն. Ծովհաննէսեան

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՍԼԽՎԻՑԿԻ «ԽՈՐԱՄԱՆԻ ՂԱԻԷՍԸ»

Փոխադրեց Պետ. Պոլշեանց. Թիֆլիս, 1898. գինն է 10 կոպ.։

«Խորամանկ Ղաւէսը» մի հետաքրքիր առասպել է, որ պատմում է պառաւ դայեակը, որը ընկած է եղել ռազմանների համար փորած փոսի մէջ։ Հաճի պառաւից եղել են այնտեղ մի աղւէս ու մի գայլ, որոնց հետ միասին նրանք մինչև լոյս մնացել են փոսի մէջ։ Առաւօտեան որսորդը եկել է ու ազատել պառաւին, որը տուն վերադառնալով պատմում է, ինչ որ փոսի մէջ աղւէսը պատմել է գայլին։ Այնպէս որ իսկապէս աղւէսի պատմածներն են կազմում գրքոյկի գլխաւոր նիւթը։ Աղւէսը պատմում է մի քանի դէպքեր իր մօր և իր սեփական կեանքից։ Պատմւած դէպքերից երևում է, թէ աղւէսները իրանց կեանքը նեղ վիճակից ազատելու մէջ։ Այստեղ, ի հարկէ, մի առանձին բարոյական սկզբունք չէ անցկացրած, կամ թէ որևէ կարևոր միտք չէ արծարծւած։ Մինչև իսկ փոքրիկ ընթերցողի վրայ կարող է այնպիսի տպաւորութիւն անել, իբր թէ իւրաքանչիւր արարած իր կեանքը պահպանելու համար պիտի ճարպիկ ու խորամանկ լինի։ Բայց այդ տպաւորութիւնը մեղմանում է նրանով, որ պատմող աղւէսի գործ դրած ճարպիկութիւնները ոչինչ անմաքուր տարր չեն պարունակում իրանց մէջ։ Բայց մանաւանդ արժէք է տալիս գրքոյկին այն բուն ժողովրդական լեզուն ու ոճը, որ գործադրել է մեր ծերունի վիպասանը գրքոյկը թարգմանելիս։ Մարդ չէ կարողանում հաւատալ, թէ կարդացածը թարգմանութիւն կամ փոխադրութիւն է։ Ի նկատի ունենալով, այդպիսի ժողովրդական լեզուն և այն հանգամանքը, որ գրքոյկը չընայելով իր անգազափար լինելուն, այնուամենայնիւ հետա-

քրքրութեամբ է կարդացուում, կարելի է որոշել գրքոյկի հետևեալ գործադրութիւնը. Նրան պէտք է տալ այն երեխաների ձեռքը, որոնք տակաւին ընթերցասիրութիւն չունեին, ուստի և աւելի իմաստալի մանկական ընթերցանութիւնից կարող են ձանձրանալ։ Սրանց մէջ «Խոռամաճկ աղւեսը» կարող է ընթերցասիրութիւն զարթեցնել։ Հայց գրքոյկը կընպաստէ և գիւղացոց ընթերցանութեան զարգացման։ Եթէ գիւղական ընտանիքում կարդաք այդ գրքոյկը, մեծ ու պստիկ կզմայլեն և շնորհակալ կըլինեն ձեղանից։ **Ս, Թ.**

ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎՐԱՅ

Համոզելու համար, թէ որքան զգայուն է այս կամ այն կենդանին դէպի երաժշտութիւնը, ոմն Կորշին սարքեց համերգներ Լոնդոնի կենդանանոցում։ Փորձը կատարեալ աջողութիւն ունեցաւ։

Բացի մի քանի իժերից ու սարդերից, բոլոր կենդանիները արտայայտեցին մեծ բաւականութիւն, ի հարկէ զանազան աստիճանի, երբ նրանց առաջ սկսւեց համերգը։ Կարիճները ջուրթակի առաջին ձայնի հետ արտայայտեցին մեծ հիացմունք, ապացուցանելով իրանց մըտաւոր ընդունակութիւնները։ Մողէսները նոյնպէս ցոյց տուեցին իրանց երաժշտական ճաշակը։ Նրանք համերգի ժամանակ լեզուով բլբլացնում էին գլուխները ու շարժում երգի համաձայն։

Սպիտակ արջը, լսելով ջուրթակի ձայնը, բարձրացաւ յետքի ոտների վրայ և այդպէս էլ սկսեց շրջել վանդակի մէջ, արտայայտելով իր բաւականութիւնը ցածր ձայներով։ Մոխրագոյն արջերը իսկոյն և եթ յարձակւեցին վանդակի վրայ և որպէս զի աւելի լաւ լսեն երաժշտութիւնը, գլուխները դրեցին ուսի վրայ։ Առիւծները երաժշտութեան ձայնը լսելով՝ սկսեցին տատանել իրանց ագիները՝ արտայայտելով մեծ բաւականութիւն։

Կոբրա-օձը անտարբեր չը գըտնւեց դէպի երաժշտութիւնը. նա խորը քնած էր, երբ Կորշինը մօտեցաւ նրան և Կոբրան լսելով ձայները, իսկոյն զարթնեց և որքան բարձրանում էր երգի ձայնը, նոյնքան նա աւելի ու աւելի շարժում էր մարմինն ու գլուխը։ Երգի իւրաքանչիւր ձայն ը համապատասխան փոփոխութիւն էր առաջ բերում նրա շարժողութեան մէջ։

Փիղը ցոյց տւեց իր զւարճութիւնն ու բաւականութիւնը, երբ Կորշինը սկսեց նւագել մեծ ֆլէյտի վրայ։ Նա բարձրացրեց իր թաթը և այդ դրութեան մէջ էլ մընաց, մինչև որ դադարեց երաժշտութիւնը։

Ձայլամի վրայ բաւական անախորժ տպաւորութիւն էր թողնում, երբ Կորշինը նւագում էր ֆլէյտի

վրայ։ Վագրը մեծ հետաքրքրութեամբ արտայայտեց, երբ նետագեցին ջուրթակի վրայ։

Կորշինի փորձերը ցոյց տուեցին, որ առհասարակ բոլոր կենդանիներուն վրայ ազդելի լաւ տպաւորութիւն էին թողնում ջուրթակն ու ֆլէյտը, իսկ ընդհանրապէս ապացուցուեց, որ կենդանիները զուրկ չեն գեղարուեստական ճաշակից։

Ռ. Պ.

ԳՐՔԵՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ԵՒ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(Osaur գրականութիւնից)

1. Филипповъ. Гигіена дѣтей, ц. 2. руб. Երեխաների առողջապահութեան ձեռնարկ է։ Հեղինակի խորհրդածութիւնները մատչելի են և ադքատ դասակարդի համար։

2. Кацъ. О защитѣ глаза отъ внѣшнихъ вредныхъ вліяній. Գրքոյկը խորհուրդներ է տալիս աչքերը արտաքին վնասակար ազդեցութիւններից պաշտպանելու համար։ Որքան խեղճեր փչացնում են իրանց աչքերը, նոյն իսկ կուրութիւն են ստանում միայն այն պատճառով, որ չեն հասկանում, թէ որպէս պիտի պահպանեն իրանց աչքերը։ Գրքոյկը արժէ թարգմանել։

3. Независимый. Этика обыденной жизни, ц. 1 р.։ Հեղինակը խօսում է առօրեայ տնային կեանքի մասին, օրինակ՝ հագուստի, բնակարանի, սրնունդի, կահկարասիքի, տնային գրագարանների և սրանց նման նիւթերի մասին։

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մաճ գալու վանդակ

Երբ փոքրիկ երեխաները սկսում են առաջին անգամ ոտքի կանգնել, այսինքն՝ կամենում են սովորել մանգալը, հարկաւոր է լաւ ուշադրութիւն դարձնել նրանց վրայ։ Սովորաբար մանգալը սովորեցնում են փոքրիկներին կամ նրանց ձեռքից բռնելով, կամ կանգնեցնելով աթոռի, կամ պատի մօտ։ Այդ եղանակը զանազան անյարմարութիւններ ունի։ Օրինակ երեխաները շատ անգամ կորցնում են հաւասարակշռութիւնը և վայր են գլորուում։ Կամ թէ ով ժամանակ ունի շարունակ նրանց ձեռքից բռնելու։ Ներկայումս Գերմանիայում յօրինել են մի առանձին վանդակ, որը դնում են փափուկ գորգի վրայ և երեխային գցում են մէջը։ Վանդակի երեսը ի հարկէ բաց է, միայն թէ երեխան չէ կարող նրա միջից դուրս գալ։ Փոքրիկը վանդակի փայտերից բռնած պտըտում

է, որքան սիրտը ուզում է, իսկ վայր գլորելուց ոչինչ վնաս չէ ստանում և ուրախութեամբ նորից տուքի է կանգնում։

Այլ եւ այլ

ՈՐՔԱՆ Է ԱՐԺԵՆՈՒՄ ՄԻ ԵՐԵԽԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Ֆրանսիայի բժիշկ Բոկսէլ հետևեալ հաշիւն է արել։ Տղայի ծնունդը և դաստիարակութիւնը մինչև 24-ամեայ հասակը նստում է մօտ 48,000 ֆրանկ, իսկ աղջիկը մինչև 18-ամեայ հասակը՝ 25,000 ֆրանկ։ Հետաքրքիր է իմանալ, թէ որքան է նստում մեր հարուստ հայերին՝ իրանց տղաներին և աղջիկներին օտար գ։ վերնականների ձեռին աղաւաղելը և նրանցից աննպատակ արարածներ պատրաստելը։

ՏՆԱՅԻՆ ԷԼԷԿՏՐԱԿԱՆ ՓՈՍՏԱՐԿՂ

Ներկայումս գոյութիւն ունեցող տնային փոստարկղներն ունին այն անյարմարութիւնը, որ շատ անգամ նրա մէջը նամակաբերի գցած նամակները ժամերով ընկած մնում են, որովհետև տնացիները տեղեկութիւն չեն ունենում։ Այժմ սկսել են միացնել փոստարկղը էլէկտրական զանգակի հետ։ Փոստարկղի մէջ տեղաւորում են էլէկտրական փոքրիկ գործիք։ Իւրաքանչիւր անգամ արկղի մէջ նամակ ընկնելուց, իսկոյն սկսւում է զանգահարութիւնը և տնացիք վազում են դէպի փոստարկղը։

ԴԱՉՆԱՄՈՒՐ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Անկողնում պառկած հիւանդը շատ անգամ ձանձրոյթի է զգում, բայց բժիշկը թոյլ չէ տալիս նրան կարդալ կամ որևէ աւելի ծանր զբաղմունք ունենալ։ Թէև հիւանդը դաշնամուր ածող է, շատ կուզենար ածել, բայց սովորական դաշնամուրը պառկածի համար անյարմարելի է։ Այժմ մի անգլիացի հնարել է այնպիսի դաշնամուր, որը կանգնած է ոտների վրայ, գրատախտակի պէս։ Դաշնամուրը կարելի է այնպէս տեղաւորել, որ նրա կլաւիշները շարւում են հիւանդի կրծքի մօտ և նա կարողանում է մէջքի վրայ պառկած մնալով՝ նւագել դաշնամուրը։

ԹԱՆԴԱԳԻՆ ՀԱՄԲՈՅՐ

Լոնդոնում այս օրերս տեղի ունեցաւ մի չափազանց տարօրինակ աճուրդ։ Աճուրդով ծախւող թանկագին առարկան համբոյրն էր։ Գեղեցիկ, ջահել և տաղանդաւոր դերասանուհի Գարլօռւ յայտնեց, թէ ինքն իր համբոյրը ծախում է յօգուտ աղքատների։ Աճուրդ նշանակեց և իսկոյն և եթ սինդիկատ նշանակեց, որը առաջարկեց 100 ֆունտ ստերլինգ և ապա արդէն սկսեցին բարձրացնել գները։ Ղուտով գինը հասաւ 800 ֆունտի և յաղթողը Փորտէսկիւ անունով ծեր գնդապետն էր, որը վճարեց փողը և ասաց գեղեցիկ դերասանուհուն. „Ներեցէք ինձ, բայց ես ձեր համբոյրը ինձ համար չգնեցի, այլ իմ փոքրիկ տղայի համար, որի 7 տարին այսօր լրացաւ, և այդ պատճառով խնդրում եմ ձեզ համբուրել նրան„։ Դերասանուհին հիացմունքով կատարեց այդ խնդիրքը և ամուր գրկեց և համբուրեց գեղեցիկ փափկիկ տղային, որը, սակայն, շատ շփոթւած

տեսք ունէր և, երևի, կրգերադասէր մի որևէ խաղալիկ ստանալ իր ծննդեան օրը, քան թէ այդ թանկագին համբոյրը։

«ԱՂԲԻՒՐԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Հագու. օր. Մ. Ընտանեկան տրնտեսութեան վերաբերեալ գրքերը մեր գրականութեան մէջ համարեա թէ բոլորովին չկան, ռուսաց գրականութիւնն էլ շատ աղքատ է այդ կողմից։ Իսկ գերմանական գրականութեան մէջ առանձին ուշադրութիւն է դարձրած այդ ճիւղին։ Յոյս ունենանք, որ մեզանում էլ այսուհետև կըսկսեն ուշք դարձնել նմանօրինակ նիւթերին, քանի որ պահանջ է զարթնել։

Թիֆլիս. տիկին Ֆ. Դուք ցաւում էք, որ «Աղբիւրը» լոյս չէ տեսնում աւելի մեծ ծաւալով և աւելի լաւ մշակուած։ Հայց միք մոռանալ, որ այդ կախուած է միայն ամսագրի բաժանորդների թւից։ Չէ որ նիւթը պատրաստողն էլ, մշակողն էլ, շարողն էլ, տպողն էլ պիտի մի կտոր հաց ունենան, որ կարողանան եռանդով գործ դնել իրանց հոգեկան, մտաւոր ու ֆիզիքական ոյժերը։ Դուք, տիկիններ, կատարեցէք ձեր պարտքի գոնեա տասներորդ մասը, և մենք մեր թերթերը ժամ առ ժամ աւելի ու աւելի կըկատարելագործենք։

Խմբագիր-Հրատարակիչ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Типографія К. И. Мартиросіанца, Орб. ул. д. № 1—2.
Дозволено цензурою. Тифлисъ, 5 Декабря 1898 г.

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ

Աղբիւրի *ներկայ №-ի հետ ուղարկում ենք 8 հատ բաժանորդագրական նամակներ։ Նրանցից մէկը, ի հարկէ ցանկացողը վերանորոգելով իր բաժանորդագրութիւնը առաջիկայ 1899 թ. համար, կը գրէ իր հասցէն և կուղարկէ խմբագրութեանս։*

Սակայն մի հարց, *ի՞նչ պիտի անէ մնացեալ 7-ը նամակները։*

Անշուշտ *մեր այն ընթերցողները, որոնք ափսոսկարայ տեսնում են Աղբիւր-տարազի առաջադիմութիւնը* (Աղբիւրը ներկայ նոյեմբերից լոյս է տեսնելու աւելի ընդարձակ ծաւալով եւ աւելի լաւ մշակուած նիւթերով) *կը ջանան իրանց շրջանում տարածել մնացեալ նամակները, բաժանորդներ գտնելով Աղբիւր-Տարազի համար։*

Առաջիկայ 1899 թ. Աղբիւր-Տարազը *պէտք է ունենան 3000 բաժանորդ. դրանց թւի համեմատ է կազմուած նախահաշիւս։*

Աղբիւր-Տարազի գրասենեակում վաճառւում են

	Ր.	Կ.
ԱԼԲՈՄ-ԱԼՄԱՆԱԽ 4 գոյնով, ազգ. և այլն 101 պատկեր. 2 ր. փոխ.	1	25
ՍՏԱՄՈՒՆԻ ԿԵԱՆՔԻՑ—Ծերենցի Երկուցf IX դարու (սակաւաթիւ) .	2	—
Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ. հանաստեղծութիւններ 1 ր. 50 կ. փոխարէն . .	1	—
ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑ. հանաստեղծութիւններ 60 կ. փոխ. . .	—	30
ՍՐԻՆԴ. ԲՆՈՒԹԵԱՆ երգեր և հանաստեղծութիւններ 80 կ. փոխ.	—	50
ՍԱՓՕ.	—	50
Ս. ԻԶՄԻՐԼԵԱՆԻ ՀԵՆապակու վրայ պատկերը (սակաւաթիւ) . . .	10	—
ԴՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ պատկերը 6 ր. փոխ.	4	—
ՌԵՐԿԱՆՔ, խրօմօ-ակւարել, ՌԱՖԱՅԷԼԻ Մադօնաներ, Հրեշտակներ, ՐՈՒԲԷՆՍԻ Յիսուս և Տիրամայր, ԶԻՔՍՊԻՐԻ Օմէօ-Ջուլիէթ թափանցիկ լուսի դէմ նկար, ընդամէնը 8 պատկեր. 2 ր. փոխարէն .	—	60
ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑԻ մեծագիր ֆոտօ-գրաւիւր պատկերը .	1	20
ՀԱՐԻՄԻ ՂԱՋԻԿԸ ոսկէ շղթաներում	—	50
ՄԱՅՐԻԿ ԻՆՆՋԱՐԱՆՈՒՄ խրօմօ	1	50
ՁՄԵՌ	—	20
ԱՐՏԱՂԵՍ Ե. թագաւորի մուտքը ի Հռոմ.	—	30

Բացած է 1899 թ. բաժանորդագրութիւնը

✕ ՏԱՐԱԶ ✕

Պատկերազարդ շաբաթաթերթ ընտան. ընթերցանութեան համար:

Հրատարակւում է նոյն ուղղութեամբ, ծրագրով եւ աշխատակից-ների մասնակցութեամբ:

ՏԱՐԱԶԸ լոյս է տեսնում ամեն կիրակի. իւրաքանչիւր № 1—3 թերթ. տարեկան 47—50 №№:

Տարազի պրեմիան է ԱՆՏԻՓՈՆԱ եւ ԻՄՄԵՆԱ, Հին Յունաստանի առասպելներից խրոմօ-օլէօգրաֆիական շքեղ պատկեր.

Ն Պ Ա Տ Ա Կ

ՏԱՐԱԶԸ ԱՂԲԻՒՐԻ հասունացած սաների խնդակցութեան և վշտի արտայայտողն է, նրանց մտքերի, գգացումների թարգմանը:

Տարազը ձգտում է սուրբ պիտութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առաքինութեամբ օժտուած, պիտութեան անշէջ լուսով զարգացած, եղբայրասիրութեամբ բորբոքուած հայ անպամներ սնուցանել:

Ծ Ր Ա Գ Ի Ր

Գեղարուեստ եւ պիտութիւն: Պատմական, ժամանակակից վէպեր, պատկերներ, թատրոնական դրուածքներ: Բանաստեղծութիւն: Քննադատութիւն: Կենսագրութիւն: Կար, ձև, ձեռագործ եւ ամեն նորութիւն արհեստների վերաբերեալ: Տնային. արդիւնագործութիւն, տնտեսութիւն: Ճանապարհորդութիւն եւ արկածք: Երաժշտութիւն եւ թատրոն: Լուրեր, տեղեկութիւններ: Յօդուածներ եւ այլն: Փելիետոն, ծաղր, առած եւ կատակ: Շախմատի եւ այլ խաղեր, Բիբլուս: Հարցեր, խորհուրդներ: Այլ եւ այլք: Սուրհանդակ:

Առաջիկայ 1899 թ. համար ի միջի այլոց խմբագրութեանս պարտքէ՛ն պատրաստ են Տարազի համար Ալֆոնս Դողեի ԱՆՄԱՀԸ և Ժորժ Օհեի ԿԱՄՔԻ ՈՅԺԸ—պատկերազարդ վէպեր, որոնց կլիշէները ստացած են Պարիզից և արդէն մեր պահարանումն են: Տաճկա-Հայաստանի կեանքից՝ ԱԼՄՕ, տաճիկների կեանքից ՎԻՔԵԱԼԱՅԻ ԴԱՂՏՆԻՔԸ, ինքնուրոյն վէպեր և մի շարք գիտական լուրջ յօդուածներ, որոնց թւում ՐԱՅՑ, Իսլամ, Մեր նախորդ շրջանի բանաստեղծները. Խ, Աբուվեան. Աղբիւրի համար՝ Արիստոտէլ, ՉԻԼԷՔԻ, Վալտեր Սկոտ, Ջ. Դիկենս, Գուտեմբերգ, Բիբելիօ, Պեստոլոցցի, Գրժեւալսկի և այլն:

Բացի այն, որ Տարազը ընթերցանութեան շատ նիւթ է տալիս բեւետրիստկայէց, պակաս էջեր չեն զարդարում և կրիտիկական յօդուածներով: Գեղարուեստան ու տնտեսագիտական, հասարակական գիտական յօդուածները քաղում են և կազմում հաւատարիմ աղբիւրներից մեր մասնագէտ աշխատակիցների ձեռքով: ԱՂԲԻՒՐԸ ներկայ նոյեմբերից լոյս է տեսնում ընդարձակ ծաւալով: Առանձին հոգս է տարւելու, որ ԱՂԲԻՒՐԸ իր ըստ ամենայնի օգտակար և շքեղ բովանդակութեամբ ամեն հայ ծնողից և դաստիարակից ճանաչւի իբրև ամենալաւ բարեկամ և ընկեր հայ մանկան և պատանուն:

ՏԱՐԱԶԻ տարեկան գինը 6 ՐՈՒԲ. *պրեմիայով* **7** *ր.* (արտասահման 10 ր. կամ 30 ֆր.):

Հասցէն՝ **ТИФЛИСЪ** редакція иллюст. жур. **ТАРАЗЪ** *կամ* Tiflis (Caucase). Réd. du jour. Taraz.

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Բացւած է 1899 թ. բաժանորդագրութիւնը

XVII ԱՂԲԻՒՐ XVII

Միամսեայ պատկերազարդ հանդէս մանուկների, ծնողների և դաստիարակների համար.

Կրճատարակի ցոյց ուղղութեամբ եւ աշխատակիցների մասնակցութեամբ.

Ազբիւրը պրէմիան է ԱՆՏԻՊՈՆԱ եւ ԷԳԻՊՈՍ, հին Յունաստանի առասպելներից իրոմո-օլէօգրաֆիական շքեղ պատկեր.

ԱՆՏԻՊՈՆԱ և ԷԳԻՊՈՍ. Մանկական բաժին. Մանրապատում, զուարճալի, դէպքերով հարուստ պատմութիւն, պատմուած մի հայ երեխայի մասին, որ կորցրել է իր ծնողներին և ապրել է տատի մօտ. Ամէն մի տարի Զատկի տօներին Ազբիւրը մի նոր նուէր է բերում իր ընթերցողներին. Ազբիւրը ունի մի մեծ թղթակցական բաժին, ուր ընթերցողները կարող են տեղեկութիւններ ստանալ ամէն մի հարցի մասին. Ազբիւրը ունի մի մեծ հանելուկների բաժին, ուր ընթերցողները կարող են իրանց ուժերը փորձել. Ազբիւրը ունի մի մեծ նամակների բաժին, ուր ընթերցողները կարող են իրանց նամակները տպագրել. Ազբիւրը ունի մի մեծ նկարների բաժին, ուր ընթերցողները կարող են իրանց նկարները տպագրել. Ազբիւրը ունի մի մեծ խնդրագրքոյկ, ուր ընթերցողները կարող են իրանց խնդրագրերը տպագրել. Ազբիւրը ունի մի մեծ ծանուցման բաժին, ուր ընթերցողները կարող են իրանց ծանուցումները տպագրել. Ազբիւրը ունի մի մեծ ծանուցման բաժին, ուր ընթերցողները կարող են իրանց ծանուցումները տպագրել.

ԱՂԲԻՒՐԻ տարեկան բաժանորդագինը 3 ր. արտասահման 5 ր. (15 ֆր.)

Պրէմիայով 4 ր.

Խնդրում ենք Ազբիւր-Տարազին բաժանորդ գրել յանկացողները աճապարեն փոխով ստորագրել, որպէս զի այս անցնող 1898 թւականի նման նոր բաժանորդ գրողները չզրկւեն Ազբիւր-Տարազի առաջին №№-ից.

Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюст. жур. „Агбюръ Tiflis. Caucase. Réd. du jour. «Agboür

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Բաժին.

Պատանի զոյգը. (*պատկեր*)։ *** Ջ. Բ.։ Բարի մանուկներ. *Սոֆիա Տէր-Ստեփանեան*։ Ի՛նչ էին աղմկում անձրեւի կաթիլները. Ջ. *Տէր-Գրիգորեան*։ Ամիրան (*պօէմա*). *Յարութիւն Թումանեան*։ Ծննդեան պատրաստութիւններ. (*պատկեր*)։ Հրէաստանի երկրի տակ. *Թարգմ.* Ա. *Մնացականեանց*։ Երգիչ հիւրը (*ոտանաւոր*). Յ. Թ. *Գայեան*։ Աղջիկն ու վարդերը (*Ծննդեան պատմութիւն*). *Մարտ. Ղահրամանց*։ Խելօք գոհարիկը. (*պատկեր*)։ Ծովային արհայի թագը (*Գուստաֆսոնից*). *Յովհ. Արաբաչեանց*։ Գութենբերգ. III. Ն. *աբ.* Տէր-Աւետիքեան։ Հաւաբուն. *Թարգմանեցին օր.* Օ. Մղդսեանց և *խատոյ*։ Փոքրիկ բարեարուն. *Թարգմ.* Ջ. Ներսէսեան։ Մի՛ ամաչիր, բալիկս, վերցրու բաժակը եւ շնորհաւորիր նորտարին. (*պատկեր*)։

Ա յ լ ե ւ ա յ լ f

Առիւծն ու շունը. *փոխ.* Հ. Նիկողոսեան։ Գթառատ հնդկացին (*Հին առասպել*). Հ. Բ.։

Ջ ւ ա ր ճ ա լ ի f

Գրաւախաղ (*ֆանտ*)—Գ. *Բաբուրեանց*։ Անեկդոտ։

Բ. Բաժին.

Ընտանիք թէ դպրոց. II. Ս. Թ.։ Ընտանիքը որպէս կրթական հիմնարկութիւն. *փոխադր.* Ռ. *Յովհաննէսեանեան*։ «Ամիրան». *Յար. Թումանեան*։ Գուստաֆսոնի կենսագրութիւնը. Յ. Ա.։ Երեխաները Ամերիկայում։ Խաղն լուրեր.—*Օտարոտի լրագիրը, ինչից է բաղկացած մարդը*։

Ինչ կլսատ պատմի